

Chrysomelid

Prionoxystus

9(47923)
2-46

1918

29.141
Ղ-48

1699

8(47.925)
Ղ-46

8(47.925)
Ղ-46

5 SEP 2011

ՀԵՌԳ ԴՍԲՁԵԱՆ
(U. S. Uplvdtby)

31 AUG 2007

ԱՆՑԵԱԼԻ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ Ց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ճառագարան: 1870-80 թ. ականների կովկասյան իրականության մասին: Հաս. քաղ. հասանքներ: Ազգայնական հասանք: Օ. Սիմոնյան և մեղուականություն: Գր. Արմաշի, մայրական: Են. թիւ: Հայ լեզու և անլեզու նախնականություն: Գր. Տէր-Մե. իրականացումներ: Բր. Միրաչյան. Ինչպե՞ս լինի: Լեզվականություն: Բանասիրական շարժումները և հայկական նախնականություն: Ա. Արախանյան և Մուրադ Արախանյան և սոցիալական հարց: Բանասիրական գեներալատիայի հանդէս գալը: Սոցիալիստական ինտերնացիոնալիզմը և բուրժուական նախնականություն: Գայբար այդ երկու հասանքների մէջ:

39573

Հրատ. 10. Բեռլինում:

ԳԻՆՆ Ե 1 ՈՌԻՑԻՍ

Թիֆլիս, Տպարան «Մամուլ»
1918 թ.

18 JUN 2013

11,825 300

68-20

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Իմ այս „Յիշողութիւնները“ արտատպւում են „Պայ-
քար“-ից (հոկտ.—դեկտ. 1917 թ. №№ 257, 261, 265,
170, 175, 180, 185, 188, 192, 194, 195) անփոփոխ և
մի թեթև յաւելումով: Զանազան կողմերից դիմումներ
եղան առանձին գրքոյկով լոյս ընծայելու առաջարկով:
Այժմ արդէն այդ բանը յաջողւում է, նամանաւանդ որ
հրատարակիչ էլ գտնւեց: „Յիշողութիւնները“ ընդգրկում
են անցեալ դարու 1870—80 թուականներից մինչև 1890
թուականները, մօտ 25-ամեայ մի շրջան:

„Յիշողութիւնները“ լոյս են տեսնում շատ վատ ժա-
մանակ, կարելի է ասել—գաժան օրերին, երբ ամենքը
զբաղւած են կարծես միայն իրանց ֆիզիքական ինքնա-
պահպանութեան և ինքնագոյութեան հոգսերով, երբ գեր-
մանական իմպերիալիզմին և նրա գործիք և դաշնակից
Թիւրքիային արդէն յաջողել է տիրել մեր երկրին, նրան
կազմալուծել, մասերի բաժանել, երեք ֆիկտիւ, միմեան-
ցից անկախ պետութիւնների վերածել («անկախ Վրաս-
տան», „անկախ Ադրբեյջան“, „անկախ Հայաստան“) իրանց իմպերիալիստական զիշատիչ քաղաքականութեանը
յազուրդ տալու նպատակներով:

Գերմանական միլիտարիստ ամենառէակցիոն իմպե-
րիալիզմը իր դաշնակից Թիւրքիայի միջոցով հարկադրեց
նախ և առաջ Անդրկովկասին Ռուսաստանից անջատել և
անկախ յայտարարել իրան, ապա ամբողջ երկրի տիրա-
պետութիւնը զիւրացնելու և իր իմպերիալիստական հեզե-
մոնիան ճանաչեցնելու բոլոր ժողովուրդներին՝ նրան յա-
ջողեց նոյն Թիւրքիայի միջոցով և մեր երկրի ուէակցիոն
թիւրքոֆիլ և դաւաճան տարրերի աջակցութեամբ երկրի
միութիւնը կազմալուծել և մասերի բաժանել: Նրա
նպատակը պարզ է.—Անդրկովկասում բազա ստեղծել
անզլիական իմպերիալիզմի առաջխաղացութեան (Պարս-
կաստանի և Միջագետքի կողմից) ճանապարհը կտրելու և
յաղթահարելու նրան ասիական ֆրոնտում:



4313-91

Մեր երկիրը ընկել է ներկայումս արդէն գերմանական իմպերիալիզմի ձերանները: Անհաւանական չէ, որ մօտ ապագայում նա գերմանական և անգլիական իմպերիալիզմի բազմութեան թափառեմ դառնայ:

Համաշխարհային պատերազմը, ինչպէս շատ երկիրներ, այնպէս էլ Անդրկովկասը տակնուվրայ արեց: Սակայն գերմանիզմի և թիւրքիզմի յաղթանակին չիչ նպաստեց Ռուսաստանի և մեր երկրի դեկապարներէ տնարգ և դուաճան քաղաքականութիւնը:

Ոչ թէ միայն սոցիալիզմի, այլ և գեմոկրատիզմի տարրական սկզբունքների դուաճանութեան կնիքը դրեցին իրանց ճակատին „յեղափոխական“ և „սոցիալիստ“ ճանաչած „լիզերներից“ շատ շատերը: Արժէք այդ մասին մի առանձին գիրք գրել:

Գերմանիայի և Թիւրքիայի բռնապետական լուծի տակն ենք գտնուում այժմ: Երկրի նորմալ զարգացման ընթացքը կատաւորօրէն կերպով կախուեց: Սև ունկցիան շղթաներ է կուում-կոփում մեր տարաբաղդ ժողովուրդների համար...

Սակայն յուսահատուել պէտք չէ ամենևին, որովհետև ինչ տեսակ սև օրեր տեսնելու լինինք, դա միայն ժամանակատր է: Անվերջ գործել, կուել է հարկատր, միայն գիտակից գեմոկրատիայի արթուն լինելու, կազմակերպուելու և պայքարելու պայմանով վաղ թէ ուշ յաղթանակը տանելու է լոյսը խաւարի վրայ, ազատութիւնը՝ բռնութեան վրայ, շահագործող, կեղեքող ընդհանրութիւնը՝ շահագործող, կեղեքող փոքրամասնութեան վրայ:

Այդ է ցոյց տալիս մեզ պատմութեան, զիտութեան և փորձի փարոսը...

Վերոգ Ղարաջեան
(Ս. Տ. Արկովի)

15 յունիսի, 1918 թ.
Թիֆլիս:

ԱՆՑԵԱԼԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

I

Իմ բարեկամներից և ընկերներից շատերը դիմել են ինձ գանազան ժամանակներում և առաջարկել՝ գրել անցած ու գնացածի վերաբերեալ իմ յիշողութիւնները. դիմող ընկերների բուռն ցանկութիւնն է եղել զլիսաւորապէս մեր կեանքի հասարակական-յեղափոխական անցեալի մասին ստոյգ, օրիէկտիւ պատմական տեղեկութիւններ ստանայ ինձնից՝ որպէս մեր յեղափոխական սերունդին պատկանող աւագադոյն անգամներից մէկից: Ճշմարիտն ասած՝ մի այդ տեսակ զիտաւորութիւն ես միշտ ունեցել եմ, սակայն ժամանակը և հանգամանքները չեն ներել ինձ այդ զիտաւորութիւնը ի կատար ածել: Նամանաւանդ յեղափոխութեան ներկայ շրջանի մտահոգ և բազմազբաղ օրերին՝ առաւել ևս այդ բանը թէ դժւար և թէ երկրորդական զբաղմունք էր թւում ինձ: Յամենայն դէպս ընկերների թախանձանքը թելադրում է ինձ ներկայ պայմաններում գրել այն, ինչ որ աւելի հանգիստ ու խաղաղ ժամանակների զբաղմունքի առարկայ պէտք է լինէր:

Ես միայն կը խնդրեմ ընթերցողին վերաբերել դէպի իմ յիշողութիւնները ոչ այնքան խիստ, որովհետև ես արձանագրում եմ ուղղակի այն, ինչ որ մնացել է իմ յիշողութեան մէջ, առանց դիմելու այլոց վկայութիւնների և կամ զրական աղբիւրների:

Ես կսկսեմ հին, շատ հին ժամանակներից, անցեալ դարու 80-ական թւականների սկզբից: Դա այն ժամա-

նակն էր, երբ ամենուրեք տիրում էր մութն ու խաւարը, երբ յեղափոխութեան գործունէութեան և շարժումներէ մասին խօսք անգամ չէր կարող լինել: Այդ ժամանակը վերջին երկու տասնեակ տարիների յեղափոխական շարժումների նախապատմական շրջանն էր, եթէ կարելի է այսպէս ասել:

70—80-ական թւականներէ մեր հասարակական-արնատեսական կեանքը զուրկ էր դեռ ևս զարգացման այնպիսի պայմաններից, առանց որոնց հասարակական-յեղափոխական շարժումը անհնարին է երևակայել. կային, պատահում էին այդ շրջանում մէկ-մէկ անհատներ, որոնց մէջ դրսի ազդեցութիւնների և կամ ինքնազարգացման շնորհիւ նկատելի էր լինում յեղափոխական արամադրութիւն և նոյնիսկ մտածելակերպ, բայց նրանց ջանքերը կամ գործնական որևէ քայլը անհատական նեղ շրջանակներից զուրս չէին կարող անցնել՝ ոչ թէ միայն քաղաքական-ոտոխանական պայմանների անյողթելի դժարութիւնների պատճառով, այլ նամանաւանդ գլխաւորապէս այն պատճառով, որ յեղափոխական շարժումների զարգացման համար հող չկար, չկային դրա համար օրիէկտիւ անհրաժեշտ պայմաններ:

Մեր գիւղական կեանքը այն ժամանակ շատ աւելի ողբալի պատկեր էր ներկայացնում անկտակած, քան ներկայումս. նատուրալ տնտեսութիւնը տիրապետող էր:

Քաղաքները աւելի լաւ վիճակի մէջ չէին. նրանք շատ հեռու էին բարգաւաճ լինելուց. նոր-նոր սկսել էին դուրս գալ իրենց ասիական մրափից. գլխաւորապէս գործողը առևտրական կապիտալն էր, այն էլ շարչիական և վաշխատուական ձևերով. արհեստները և մանր արդիւնաբերութիւնն էր շունչ աւտը քաղաքներին—նոյն իսկ հովիտի մայրաքաղաք Թիֆլիսին: Բագուն էր միակ քաղաքը, որ 70-ական թւականների վերջից սկսել էր արդէն դուրս գալ կապիտալիստական-արդիւնագործական զարգացման ճանապարհի վրայ շնորհիւ իր նախնային ար-

դիւնագործութեան: Երկրում չկային լաւ ճանապարհներ, հաղորդակցութիւնը շատ դժւար էր կաթողի չկար: Առաջին երկաթուղու գիծը անցաւ Թիֆլիսից-Փոթի 1883 թւին, յետոյ մի այլ գծով Բաթումը կապուեց Թիֆլիսի հետ, իսկ հետևեալ 1884 թւին միայն Թիֆլիսը միացաւ երկաթուղային գծով Բագունի հետ:

Պրոլետարական դասակարգ՝ այն մաքով, ինչպէս հասկանում ենք և ինչպէս նա գոյութիւն ունի այժմ՝ գոյութիւն չունէր այն ժամանակ քաղաքներում: Թիֆլիսում և մանաւանդ Բագում կար բանւորութիւն, բայց դեռ սակաւաթիւ և զարգացման սաղմնային դրութեան մէջ:

Թիֆլիսում 70-ական թւականներին հիմնւել էր մի կուսակցութիւն՝ գործարան, Միլգունների գործարանը, ուր աշխատում էին հազարից աւելի բանւորներ. այդ գործարանը յետոյ անցաւ Ֆրանսիացի վաճառական Րիշարի և յետոյ Չիթախովի ձեռքը: Գրեթէ 30 տարի գոյութիւնից յետոյ փակուեց նա: Այդ գործարանի թաղամասում ապրելով մինչև գրեթէ 18 տարեկան հասակս՝ ես դիտում էի այդ անդիտակից, անզբաղէտ երկսեռ բանւորների դժոխային տանջանքները և այն աներևակայելի շահագործութիւնը, որին նրանք ենթակայ էին: Գործադուլներ շատ յաճախ էին տեղի ունենում թէ վարձագնի, թէ տուգանքի և թէ գիշերային աշխատանքի պատճառով:

1884—5 թւականներին ես առիթ ունեցայ գնալ Բագու և մնալ այնտեղ մի առ ժամանակ. ես գտայ այնտեղ բանւորական խմբեր՝ գլխաւորապէս հայերից, որոնց հետ իմ ունեցած մի շարք զրոյցները ինձ վրայ այն տպաւորութիւնը թողին, որ նրանց մէջ դեռ ամուրս նրստած էր մանր-արհեստաւորական հոգեբանութիւնը և ճագատիրական ոգին: 1885 թւին իմ մի ճանապարհորդութեան ժամանակ Գանձակի նահանգում, ես այցելեցի Գետաբէզի Սիմեոնի հուշակաւոր պղնձահանքի գործարանը, ուր բանում էին մի քանի հազար բանւորներ: Գործաբանին կից հիմնւել էր բանւորների մի գաղութ:

Այդ ժամանակները և թէ յետոյ մեր երկրի միւս մասերում՝ իմ բնակութեան կամ այցելութեանս ժամանակ ես տեսել և հանդիպել եմ այստեղ-այնտեղ մանր գործարանական և արդիւնաբերական ձեռնարկութիւններ, որոնց մէջ շատ թէ քիչ թւով բանւորներ՝ թողած իրենց գիւղերն ու բնակավայրերը, աշխատում էին իրենց ապուստը հայթայթելու:

Ես այս հատուկտոր տեղեկութիւնները տալիս եմ և յիշում եմ միայն նրա համար, որ ցոյց տամ իմ անձամբ տեսածի հիման վրայ, որ 80-ական թւականներին արդէն նոր-նոր բանւորական մասսաները սկսել էին երկրի գլխաւոր աւետարա-արդիւնաբերական պունկտերում և ձեռնարկութիւններում հաւաքել և տեղաւորել:

Այստեղ-այնտեղ, մանաւանդ Բագուի նաւթաշրջանում արդէն երբեմնակի տեղի էին ունենում գործապուլներ, բայց նրանք բոլորովին անկազմակերպ, տարերային բնաւորութիւն էին կրում այդ ժամանակ. ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում նրանց վրայ և ամնկատելի էլ անցնում էին նրանք:

Անդրկովկասեան երկաթուղու գիծը անցնելուց յետոյ մեր երկրի առևտուրը և արդիւնաբերութիւնը սկսում է արագ զարգանալ, իսկ բանւորական մասսաները աւելի ևս աճում և խտանում են կենտրոններում. նրանց տնտեսական պայքարը թէ գործադուլի և թէ այլ և այլ ձևերով տեղի է ունենում աւելի ևս յաճախ, թէ և դարձեալ սպորայիք բնաւորութեամբ. Սկզբնական տարերային շարժումների այս պրոցեսը տևում է 15—20 տարի, մինչև 90 թւականների վերջը, որից յետոյ բանւոր դասակարգը սրտիս առանձին դասակարգային կազմակերպութիւն հանդէս է գալիս և սկսում փոքր առ փոքր կազմակերպւած ձևով պայքար մղել իր դասակարգային թշնամիների դէմ:

Մեր հասարակական-յեղափոխական կեանքի այս նախապատմական շրջանում ինչ խմբեր, ինչ հոսանքներ են

առաջ գալիս—այդ բանը կաշխատեմ գրի անցնել ընդհանուր գծերով:

II

Ես ասացի, որ անցեալ դարու 70 թւականների վերջում և 80-ականի սկզբներում կօրելի էր պատահել մէկ-մէկ անհատներ մեր կովկասեան հայ իրականութեան մէջ յեղափոխական տեմպերամենտով. արամադրութեամբ և նոյնիսկ մտածելակերպով. նկատելի էր արդէն որոշ չափով ուսուսական գրական-հասարակական հոսանքների ազդեցութիւնը ուսանողական, ինտելիգենտական խմբերի վրայ. ուսւ արմատական գործիչների (գրական և հասարակական) ազդեցութիւնը աւելի մեծ էր ուսանողական մատաղ սերնդի վրայ. ուսանողութեան և թիֆլիսի բարձր դասարանների աշակերտութեան մի մասի—հենց թէկուզ շատ փոքրաթիւ մասի—համար Չերնիշևսկի, Դորբոլիբովի, Պիսարև, Տուրգենև և այլն սիրելի հեղինակներ էին համարւում: Թիֆլիսի—կովկասի այդ մտաւոր և հասարակական խմբակցութիւնների կենտրոնական քաղաքի շատ քաղաքամասերում—կուկիայում, Վանքի թաղում, Սոլոլակում, Խարբուխի թաղում և այլն 79—80—81 թւականներին կային բազմաթիւ ուսանողական-աշակերտական կրուժոկներ. այդ խմբերի (10—15 հոգուց բաղկացած) ժողովները տեղի էին ունենում անլեզայ, գիշերները, թէ և ոչ-պարբերաբար. նրանք հետապնդում էին բացառապէս ինքնապարզացման և ինքնակրթութեան նպատակները. ինքնաբերաբար իրանք աշակերտ-ուսանողներն էին հիմնել այդ կրուժոկները: Աշակերտներից կամ ուսանողներից աւելի կարգացածը սկսում էր զրոյցներ զանազան գրական և և գիտական հարցերի մասին և այդ հարցերի շուրջը մտքերի փոխանակութիւն և շփումն էր տեղի ունենում, կամ թէ մէկը կարգում էր Տուրգենևից, Դորբոլիբովից, Պիսարևից և այլն և միւսները՝ լսում: Եւ պէտք է խոստովանել,

որ այդ ժողովներին, որոնք, ի դէպ ասել՝ անսխտեմ, անհազամակերպ և որ աւելի վատն էր՝ անդեկավար էին, աշակերտութիւնը մանաւանդ՝ մտաւոր աւելի մեծ պաշար և աւելի առողջ մտունդ էին ստանում քան իրենց բնութեան յետադէմ դպրոցներում: Երբեմն փիլիսոփայական բարձր թեմաների վրայ էին զրոյցներ տեղի ունենում. շատերը իհարկէ չէին հասկանում. ինչոք չէին հասկանում ծալում դրադ էին դնում ինստիտուտաբար և ստաճողական սկսում: Ինչ որ լինի, և աւելի պարզից և հասկանալից սկսում: Ինչ որ լինի, եթէ մեծ և շատ բան չէին ստանում այդ ժողովներին, յամենայն դէպս դրական արդիւնքը լինում էր այն, որ աշակերտ-ուսանողների մէջ զարթնում, զարգանում էին ընկերակցական-հասարակական կապ և յարաբերութիւններ, հասարակական ասպարէզում գործելու ձգտումներ—այդ արդէն մեծ բան էր:

Մեր աչքի ընկնող հասարակական գործիչներից մեր քանիսը այդ ժողովների բովով անցան: Իսկ մեր հասարակական պատմութեան այն շրջանն էր, երբ ուս-թիւրքական պատերազմը նոր էր վերջացել. Տաճկաստանում «հայկական ռեֆորմների» հարցը դրւած էր արդէն ասպարէզում, Բերլինի դաճնագրութեան 61-րդ յօդւածով «Հայկական խնդիրը» միջազգային խնդիրների շարքն էր ցուցնուով էին ցուցնում, որ Երբ պատերազմի ժամանակ և պատերազմից յետոյ այն ժամանակ և հայրենասիրական թիւրքական ռեֆորմներից գէպի կովկասեան սահմանները հայ զորքի հայրենասիրական հոսանք էր ստեղծւել, հայ բազմաթիւ ընկերակցական խմբերով ցանկերը ստեղծւել էին սովից, կոտորածից, թիւրքական ռեֆորմներից: Իսկ այն ժամանակահատիկներն էին, երբ Գր. Արծրունին իր Մշակով, իր մարտապրումն գործին: Իհարկէ այդ պատգամը այնպէս կան զրջով, ինչպէս ինքն էր ասում, իր «մարտիկական» էին հասկանում այն ժամանակ, ինչպէս այժմ է հասարակական-հայրենասիրական վէպերով (Ջալալեղլին, Սենթեր, միայն թէ ազգի անկախութիւն, ազատութիւն լինելու կայծեր և այլն) հայ ընթերցող երիտասարդութեան ուշադրանքն արդեօք մի «հայ ազնիւ աւագակ» Անդրկովկաս

ընթացին էր լարում դէպի տաճկահայերի ոգրալի վիճակը: 80-ական թւականների սկզբներին ստեղծւել էր բնութեանը սերունդի շրջաններում մի տեսակ՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ թունդ ազգասիրական մթնոլորտ: Եթէ ոգրութիւն էր միայն տիրել, ոչ թէ միայն շատ արձեւ հայկական մտահոգութեան առարկայ էր դարձել հայկական արեւով էին երդում ամենքը, այլ այդ ժամանակից արդէն շուրջ-շուրջ անհատներ սկսում էին սահմանից անցնել—«Երկիր» գնալ, այն աւետաց երկիրը, որի հետ կապւած էին այնքան յոյսեր և երազներ: Երբ արդէն այդ անձինք գործելու, հայ ժողովուրդը իր իրաւունքները (իսկ ազգայում նաև խմբերը) դիմում էին ամեն հարաւոր միջոցների զէնք ձեռք բերելու, ինչպէս անցկացնելու սահմանից: Կոխ մղելու հարաւոր անհրաժեշտ էր զինավարժ լինել, զիտնալ զէնք գործածել իր իրաւունքները: «Իսկապէս, հերոսական» յատկութիւններով «հայկական ռեֆորմների» հարցը դրւած էր արդէն ասպարէզում, Բերլինի դաճնագրութեան 61-րդ յօդւածով «Հայկական խնդիրը» միջազգային խնդիրների շարքն էր ցուցնուով էին ցուցնում, որ Երբ պատերազմի ժամանակ և պատերազմից յետոյ այն ժամանակ և հայրենասիրական թիւրքական ռեֆորմներից գէպի կովկասեան սահմանները հայ զորքի հայրենասիրական հոսանք էր ստեղծւել, հայ բազմաթիւ ընկերակցական խմբերով ցանկերը ստեղծւել էին սովից, կոտորածից, թիւրքական ռեֆորմներից: Իսկ այն ժամանակահատիկներն էին, երբ Գր. Արծրունին իր Մշակով, իր մարտապրումն գործին: Իհարկէ այդ պատգամը այնպէս կան զրջով, ինչպէս ինքն էր ասում, իր «մարտիկական» էին հասկանում այն ժամանակ, ինչպէս այժմ է հասարակական-հայրենասիրական վէպերով (Ջալալեղլին, Սենթեր, միայն թէ ազգի անկախութիւն, ազատութիւն լինելու կայծեր և այլն) հայ ընթերցող երիտասարդութեան ուշադրանքն արդեօք մի «հայ ազնիւ աւագակ» Անդրկովկաս

սեան լեռներում և անտառներում, երկարատև որոնումները որևէ արդիւնք ունեցան արդեօք—ես այդ մինչև այժմ չգիտեմ. զիտեմ միայն հաստատապէս այն, որ այդպիսի արամադրութիւն գոյութիւն ունէր, „իզիթ հայ հերոսներ“ որոնելու ջանքեր լինում էին: Եթէ այդ ժամանակները (80-ական թւականների սկզբներում) այդպիսի արտակարգ հերոսների որոնումները ապարդիւն էլ անցան, այնուամենայնիւ շատ մօտ ապագայում, մի քանի տարից յետոյ, «հերոսական սխրագործութիւններ» կատարելու գաղափարը բաւականին ժողովրդականացանրա իրական արտայայտումը մենք դո՛նում ենք այն զինւած խմբական-հրոսակային արշաւանքների մէջ, որոնք 80-ական թւականների վերջից սկսած կազմակերպւում էին (ինչպէս օր. Կուկունեանի խումբը) մի „հերոսի“ զլխաւորութեամբ:

Սկզբնական շրջանի այդ „հերոսներ“ տարօրինակ ազատագրական էկսպերիմենտները արձագանգ են դնում ապագայում հնչակեան և նամանաւանդ դաշնակցական խմբերում: Անդրանիկները, Քեռիները, Եփրեմները դառնում են այնուհետև այդ իդէալական հերոսները, „ազգային հերոսները“: Դիւցազնական-հերոսական այդ շրջանը թերևս պէտք է այսուհետև վերջացած համարել՝ տաճկահայ ժողովրդի 1915 թւի անլուր կոտորածից և բնաջինջ լինելուց յետոյ: Հայկական դիւցազնութիւնը նոքագոյն պատմական շրջանում ունեցաւ իր աղէտալի հետևանքները: Նրան վերադառնալը կը նշանակէր միայն նորանոր աղէտներ ստեղծել հայ դժբախտ իրականութեան մէջ:

Ես փոքր ինչ շեղեցի նիւթիցս. 80-ական թւականների շրջանի մասին էր խօսքս, երբ ազգասիրական հոսանքը մի յայտնի դարգացում ստացաւ Կովկասեան հայ իրականութեան մէջ: Հայ հասարակական և գրական գործիչները՝ Արծրունի, Բաֆֆի, Գամառ-Քաթիպա, Յովհաննիսեան (Արզար), Ադամեան (գերասան) և այլք 70—80-ական թւականներին, էլ չխօսելով 60-ական թւական-

ների գործիչների մասին (Ստ. Նազարեան, Միք. Նալբանդեան), կոչւած էին նպաստելու հայ ազգի հաւաքման գործին. և նրանք մեծապէս նպաստեցին այդ գործին: Բայց այդ ազգի հաւաքման, կազմակերպման հենց սկզբնական շրջանում, բացի տաճկահայ ազգասիրական հոսանքը, հայ իրականութեան մէջ առաջ են դալիս և այլ հասարակական հոսանքներ՝ մշակականութիւն, մեղուականութիւն (և յետոյ նոր-դարականութիւն) և երրորդը՝ թէև աւելի թոյլ արտայայտւումով՝ նարոդնիկական հոսանքը: Այս հոսանքների մասին կը լինի այժմ իմ խօսքը:

III

Երկու հասարակական հոսանք աւելի կամ նւազ թափով տիրող է եղել մեր ազգային-հասարակական կեանքում վերջին 19-րդ դարու երկրորդ կէտում: Արծրունու մշակականութիւնը ազգային լիբերալ մի հոսանք էր, որը աւելի մեծ ծաւալով և ժողովրդականութեամբ շարունակութիւնը կարելի է համարել 50-ական և 60-ական թւականների Ստ. Նազարեանի «Հիւսիսափայլի» հոսանքի: Պետրոս Սիմէօնեանի մեղուականութիւնը այդ պատմաշրջանի երկրորդ հոսանքն էր, յետադիմական-կղերական մի հոսանք, որը շարունակութիւնն է և արտայայտիչը մեր ազգային աւանդական կղերականութեան իդէոլոգիայի:

Այդ հոսանքները ճանաչւած են մեզանում որպէս գաղափարական հոսանքներ՝ մշակական և մեղուական (և յետոյ նոր-դարական) կուսակցութիւնների անւան տակ: Աշխարհիս երեսին չէ եղել մի գուտ գաղափարական հոսանք առանց սնտեսական բազիսի: Հոգևորականութիւնը մեր մէջ, որի իդէոլոգները պնդում են թէ լիբերալ-ժողովրդական է և զուրկ է իբրև թէ կղերական ուղղութիւնից, եղել է մի դաս, որի գոյութիւնը հիմնւած է եղել սնտեսական-արդիւնաբերական ոյժերի վրայ: Այն աճագին կարւածները, հոգերը, անտառները և գիւղերը,

որոնք էջմիածնի սեփականութիւնն են կազմում դարերից ի վեր, մինչև այժմ հանդիսանում են հոգևոր իշխանութեան գոյութեան խարխիւր. հայ հոգևորականութիւնը դարերի ընթացքում եղել է հայ ժողովուրդի համար մի իշխանութիւն, որը գրեթէ նոյն նշանակութիւնն է ունեցել, ինչ որ Ֆէոդալական (աւատական) իշխանութիւնները միջին դարերում, ի բաց առնելով մասամբ այն քաղաքական դերը, որ վերջիններս ունեցել են: Մեր հայ հոգևոր-Ֆէոդալ իշխանութիւնը ծանրանում էր գլխաւորապէս հայ գիւղացութեան վրայ: Բացի գիւղացութեան «ազատ» մասի շահագործումը, էջմիածնապատկան հողերում և և գիւղերում հոգևոր իշխանութեան տակ գտնւող գիւղացութեան վիճակը աւելի վատթար է եղել, քան այլ կալւածատիրական, հողատիրական բայոնների գիւղացութեան վիճակը, որովհետև առաջին դէպքում գիւղացութիւնը գործ ունէր երկու իշխանութեան հետ—հոգևոր և մարմնաւոր, և նրանց երկուսին էլ պէտք է վճարէր հարկեր ու տուրքեր, մինչդեռ վերջին դէպքում նա գործ և յարաբերութիւն ունէր գլխաւորապէս մարմնաւոր իշխանութեան հետ:

Սուք չկայ, որ հայ հոգևոր-Ֆէոդալական իշխանութիւնը տնտեսական-արդիւնաբերական մտքով այն դերը չէ խաղացել, ինչ որ օր. կաթոլիկ հոգևորականութիւնը Ֆրանսիայում, Իտալիայում և այլն, որի արբայութիւնները և եպիսկոպոսութիւնները մի-մի Ֆէոդալ իշխանութիւններ էին միջին դարերի ընթացքում՝ բառիս բուն նշանակութեամբ. նրանք բացի ընդհանուր գիւղացութեան շահագործումից, ունէին իրենց հողային-արդիւնաբերական ընդարձակ ձեռնարկութիւնները, որոնք պատուար էին հանգիստում նրանց տնտեսական և քաղաքական իշխանութեան համար: Որքան ինձ յայտնի է, պատմութեան մէջ հայ հոգևոր իշխանութիւնը մի այդպիսի տնտեսական ֆակտորի դեր չէ խաղացել:

Սակայն մի կարևոր պատմական իրողութիւն պէտք չէ

աչքից բաց թողնել. հայ անկազմակերպ, յետամնաց բուրժուազիան, մեր շարժիական և ասիական բնոյթ կրող վաճառական դասակարգը, որի ներկայացուցիչների մասնակցութիւնը մեր ազգային-հասարակական կեանքի գրեթէ բոլոր ասպարէզներում իր տնտեսական-նիւթական ոյժի շնորհիւ աչքի է ընկել, միշտ եղել է հայ հոգևորականութեան աջ թևը. հայ հոգևորականութիւնը և իշխանութիւնը յենւել է այդ դասակարգի վրայ. նրանք երկուսն էլ կազմել են դարերի ընթացքում այն յաւիտենական բլուր, որով ամենայն եռանդով և ձևով շահագործել են հայ աշխատաւոր մասսաներին. մէկը միւսին նեցուկ, մէկը միւսին աջակցող ամուսնական կապերով շողկապւած՝ հասարակական այդ երկու դասակարգերի տնտեսական և բարոյական շահագործումը շատ ժամանակներից ի վեր եղել է այն հիմքը, որի վրայ կառուցւել է մեր ողջ ազգային-եկեղեցական կեանքի շէնքը:

Բոլորովին սխալ է և անհեթեթ այն կարծիքը, թէ մեր հոգևորականութիւնը կղերականութեան ուղղութիւնից և ոգուց զուրկ է, որ նա ժողովրդական է և այլն. աշխարհիս երեսին չկայ հոգևորականութիւն, որ կղերական ուղղութիւնից զուրկ լինի. կասկած չկայ, որ հոգևորականութիւնների մէջ գունաւորումներ (ОТТѢНОКЪ) լինում են. կրօնի ուսմունքը կազմելով ամեն մի հոգևորականութեան գիտութիւնն ու աշխարհայեցողութիւնը, որը աշխարհային կեանքից զուրս բնազանցական, հանդերձեալ կեանքի հետ է կապում մարդկային կեանքի երջանիկ կացութեան և բարօրութեան հարցերը, ինքնըստինքեան սպեկուլեատիւ ուսմունք է, որի ձգտումն ու նպատակը ժողովրդական մասսաների մէջ կղերական ուղղութիւն և ոգի զարգացնելն է. տիրող դասակարգերի—հոգևորականութեան, Ֆէոդալականութեան և բուրժուազիայի ամենամեծ գէնքը մասսաների աչքերը վարագորելու, գիտակցութիւնը մթացնելու համար՝ եղել է միշտ կրօնի ու եկեղեցու ինստիտուտը: Հոգևորականութիւնը

հին, շատ հին ժամանակները գործող մի սյժ է հանդիս-
ացել, որը ի մեծ դժբաղդութիւն հայ ժողովրդի՝ պահ-
պանել է մինչև այժմ իր նշանակութիւնը:

Հայ հոգևորականութիւնը quasi-ժողովրդակէս, հայ
եկեղեցին quasi-ազատամիտ և „սահմանադրական“ այն
չափով, որ չափով այդ անւան տակ և եկեղեցու
«սահմանադրական» կարգերի շնորհիւ հնարաւորութիւն
է ստեղծել ավելի սերտ կապելու ժողովրդական խաւե-
րին եկեղեցու և հոգևորականութեան հետ, հետևապէս
ավելի ևս դիւրութեամբ և ինտենսիւ, լայն շափերով
շահագործելու մասսաներին:

Անա և այս „ազգային հոգևորականութեան“ աշխար-
հայեցողութեան, տենչերին և ձգտումներին ծառայելու
համար՝ կոչւած էր 70—80-ական թւականների մեղու-
ականութեան հոսանքը և մեղուական կուսակցութիւնը:

Հայ հոգևորականութեան շահերի և աւանդական հա-
կումների արտայայտիչն ու պաշտպանը հանդիսանում էր
այդ կուսակցութիւնը. նա պարփակում էր „ազգային դա-
ղափարը“ լուսաւորչական եկեղեցականութեան, լուսա-
ւորչական և հայ «առաքելական» եկեղեցու պետի իշխա-
նութեան—կաթողիկոսութեան մէջ: Ով դէմ էր այդ բա-
նին, ով հակառակ կարծիքի էր՝ նա հերետիկոս էր, նա
ազգուրաց, ազգի կործանիչ էր: „Արտաքոյ Հայաստան-
եօց Առաքելական եկեղեցոյ չիք վերկոթիւն“ — անա
«ազգային» այն նշանաբանը, որ մեղուականութեան գաղա-
փարականութեան հիմքն էր կազմում: Մեղուական կու-
սակցութեան սոցիալական կազմը ներկայացնում էր հայ
հոգևորականութեան գրեթէ մեծամասնութիւնը, հայ յե-
տադէմ բուրժուազիան (վաճառականներ, վաշխառուներ
և այլն) և ինտելիգենցիայի խաւարամիտ մասը:

Երբ Արժրունին իր Մշակով հանդէս եկաւ և սկսեց
իր «մտքակողական» եռանդուն գործունէութիւնը, երբ
նա «յանդգնութիւն» ունեցաւ „խղճի ազատութիւն“ և
„առանց կրօնի խորութեան“ լուրճները ալձակել, հայ

մեղուական կղերական ձանձաշին աշխարհում կատարեալ
յուզումն առաջ եկաւ: Երկար ատիւներ ընթացքում
մեղուական և մշակական հոսանքների մէջ տեղի ունէր
սուր պայքար ու բանակոխ: Անողոր էին և չէին խնա-
յում միմեանց „Մեղու Հայաստանի“ -ն և „Մշակ“-ը,
իսկ յետագայ տարիներին՝ „Նոր-Գործ“ և „Մշակ“-ը:

Առաջին անգամն էր տարբեր հոսանքների և աշխար-
հայեցողութիւնների նման սուր ընդհարումն տեղի ունե-
նում հայկական իրականութեան մէջ:



Մշակականութիւնը մի նոր
էր մեր իրականութեան մէջ: Նրա շուրջն էին հաւաքւել
Արժրունու օրով հայ հասարակութեան առաջադիմական,
ինտելիգենտ լաւագոյն ոյժերը: Մշակականութիւնը նոյն-
պէս սոսկ գաղափարական հոսանք չէր, առանց տնտեսա-
կան հիմքերի վրայ կառուցւած աշխարհայեցողութեան մի
կուսակցութիւն: Յանձին իր հիմնադիր Գր. Արժրոնու և
„Մշակ“ օրգանի՝ նա մի հոսանք էր, որը ներկայացնում
էր և պաշտպանում էր ազգային միութիւն, բոլոր դա-
սակարգերի համերաշխութիւն առաջադիմութեան դրօշակի
տակ: Երագիր և քաղաքական որոշ պլատֆորմա, որքան
ինձ յայտնի է, երբէք չէ ունեցել այդ կուսակցութիւնը:
Արժրունին իր «Մշակ»-ում անխնայ խաղաղւոյն մ էր,
մտքակում այն բոլորը, ինչ որ իր ժամանակին խաւար,
յետադիմական էր համարւում: Նա կոխ էր մղում յանուն
առաջադիմութեան և քաղաքակրթութեան անխտիր ազգի
բոլոր դասակարգերի դէմ, եթէ նրանցից մէկը կամ միւսը
առաջադիմական շարդի վրայ չէր կանգնած: Այդ առա-
ջադիմութիւն աււած բանը պէտք էր փնտրել ժամա-
նակակից կոլտուրայի և քաղաքակրթութեան մէջ: Ար-
ժրունին և իր «Մշակը» հաւատում էին, որ բոլոր գասա-
կարգերը, նոյն իսկ պատմականօրէն արդէն անգամալի

1911
1903



կերպով ոչնչութեան դատապարտած դասակարգերը, ինչպէս օրինակ հոգևորականութիւնը, կուլտուրայի և քաղաքակրթութեան առողջ հիմքերի վրայ կարող են և ընդունակ վերածնել և դեր խաղալ ժողովրդական կեանքի բարօրութեան և առաջադիմութեան ուղղութեամբ: Իդէալիստական այդ մտածելակերպը յատուկ էր Արծրունուն իբրև հասարակական-ազգային դործիչի և գրողի. նա յատուկ է եղել ընդհանրապէս գրեթէ մեր բոլոր գործիչներին ու գրողներին:

Ազգի, ժողովրդի առաջադիմութեան կարապետները հանդիսանում էին՝ ըստ մշակականութեան և նրա հիմնադրի՝ «լուսաւորւած հոգևորականութիւնը և արժանաւոր ուսուցչութիւնը»: «Արժանաւոր ուսուցիչներ և հոգևորականներ» — ահա ազգի լուսաւորիչները: Այդ գաղափարով էր տարւած այն ժամանակւայ ինտելիգենցիայի, կարելի է ասել, մեծագոյն մասը: 80 և 90-ական թւականներին առաւելապէս աչքի է ընկնում «արժանաւոր հոգևորական» դառնալու ձգտումը ոչ թէ միայն թեմականաւարտ և ձեմարանաւարտ, այլ նոյն իսկ համալսարանաւարտ ինտելիգենտների մէջ: Նրանց նպատակն էր հոգևորականի վեղարի և փարաջայի ասակ աւելի արդիւնաւոր դարձնելու իրենց գործունէութիւնը: Այդ «տիրացուական ազգասիրութիւնը» համակել էր, ինչպէս ասացի, շատ շատերին: Յիշենք նրանցից մի քանիսին. առաջադիմական կամ մշակական շկօլայից — Լևոն Սօջայեան, Էջմիածնի միաբան վարդապետ, Մոսկւայի համալսարանի ֆիզիկօ-մատեմատիկական ֆակուլտետն աւարտած և ֆիզիկայի ու. ձեմարանում. Գ. Տէր-Մկրտչեան — Պարիզի ուսանող, Էջմիածնի միաբան. Արսէն վարդապետ Ղլարչեան. Գէորգ վարդ. Մուրադեան, Նիկողայոս Մելիքթեանցեան և ուրիշներ. մեղուական շկօլայից — Նահապետ վարդապետ Նահապետեան, քիմիկոս, նախկին ուսուցիչ և տեսուչ Ներսիսեան դպրոցի: Յիշենք նոյնպէս երկու այսնի զբաղէտ և վիպագիր հանգուցեալ Ղազարոս Աղայ-

եանին և Աւետ. Ահարոնեանին, որոնք 80-ական թւականներին տշխատում էին քահանայ ձեռնադրել, բայց ինչ ինչ պատճառներով այդ նրանց չյաջողեց:

Եթէ Արծրունին և «Մշակը» անխնայ պայքար էր մղում հոգևորականութեան դէմ, այդ ոչ թէ նրա համար, որ ժխտում էր հոգևորականութիւնը որպէս յետադէմ դասակարգ, այլ նրա համար, որ հոգևորականութիւնը տգէտ, անգործունեայ և խաւարամիտ էր և այդ պատճառով ժողովրդի կրթութեան և լուսաւորութեան գործում նա դեր չէր կարողանում կատարել: Նրա կարծիքով «լուսաւորւած» հոգևորականութիւնն էր կոչւած դեր խաղալու: Նա այդ պատճառով ջերմ կողմնակից էր «լուսաւորւած» հոգևորականութեան և հայ լուսաւորչական եկեղեցու ռեֆորմացիայի: Նրան թւում էր, թէ ռեֆորմացիան, այնպէս, ինչպէս նա տեղի էր ունեցել Գերմանիայում և այլ եւրոպական երկիրներում, մեծ զարկ կտար հայ ազգի առաջադիմութեան: Նա չէր կարողացել ըմբռնել պատմական այն պարզ ճշմարտութիւնը, որ հոգևորականութեան և եկեղեցու դարը շատ վտուց արդէն անցել է, որ «լուսաւորւած» հոգևորականութիւնը (ինչպէս բողոքական հոգևորականութիւնը), ինչպէս փորձը արդէն ցոյց է տւել, «լուսաւորութեան» նոր գէնքերով, աւելի նուրբ և ճարպիկ, կեղծ — գիտական միջոցներով կարողանում է աւելի դիւրութեամբ մթնացնել ժողովրդական մասսաների գիտակցութիւնը, մոլորեցնել, շեղել նրանց աշխարհային ճանապարհից. որ հոգևորականութիւնը, ինչպէս միւս տիրոգ դասակարգերը կեղեքիչ, շահագործող դասակարգ է և նրա բոլոր գործունէութիւնը ուղղւած է ոչ թէ ժողովրդի շահերին, այլ իր շահագործման նպատակներին ծառայելու, որ ժամանակակից քաղաքակրթութեան մէջ հանդէս են եկել նոր քաղաքական-հասարակական ոյժեր, որոնք և առաջ են մղում ժողովուրդների և կուլտուրան, և կրթութիւնը, և քաղաքական զարգացումը:

ի հարկէ չէ կարելի ուրանալ այն իրողութիւնը, որ մշակականութիւնը, յանձին նրա դեկավար Արծրունու, փնտրում էր նոր հասարակական խմբեր, որպէսզի կարողանար յենել նրանց վրայ: Որպէս լիբերալ-առաջադիմական հոսանք՝ նա սրոնում էր անխափր բոլոր դասակարգերից պրոգրեսիւ ուժեր, և ջանում համախմբել նրանց ազգային միութեան դրօշակի տակ:

Ինչպէս անցեալ անգամ նկատեցի, հասարակական դասակարգերի դիֆերենցիացիայի պրոցէսը դեռ նոր-նոր էր սկսել: Առևտրա-արդիւնաբերական ոյժերն ու խումբակցութիւնները ըստ նորագոյն ժամանակների պահանջներին՝ կազմակերպան սկզբնական շրջանն էին մտել: Հետեապէս Արծրունու „Մշակը“ առանձնապէս ուշադրութիւն էր դարձնում ծնող և արթնացող այդ նոր ուժերի վրայ: Նոր ուղղութեամբ և ձևերով գիւղատնտեսութեան, առևտուրի, արդիւնագործութեան, արհեստների զարգացման ջերմ կողմնակից և ջատագով էր նա: Դժւար է ասել թէ հասարակական այդ անպատկեր, զրեթէ դեռ ևս զլալի կերպով չշերտաւորւած շրջանում, որպիսի խմբերի վրայ էր յինուում Արծրունու մշակականութիւնը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ նա աւելի շուտ ազգային, մանր-բուրժուական մի հոսանք էր՝ առաջադիմական-կուլտուրական ձգտումներով:

Նրա սոցիալական կազմի մէջ մտնում էին զանազան կատեգորիայի պատկանող առաջադէմ ինտելիգենցիան (ազատ պրոֆեսիայով պարապող անհատներ, ուսուցչութիւն, ուսանողութիւն և այլն), գլխաւորապէս երիտասարդ, նոր սերունդից. հոգևորականութիւնից „կրթւած, լուսաւորւած“ անհատներ, փաճառականների և արդիւնաբերողների որոշ խմբեր, հայ արհեստաւորութեան, թէև յետամնաց և անկազմակերպ, բայց առաջադիմական տենդենցներով մի քանի տարրեր և այլն:

Արծրունու „ժողովուրդի և ազգի“ տիպիք ներկայացուցիչներն էին մշակականութեան գաղափարների սիրա-

հար Թիֆլիսեցի մանր սեզանաւոր Սանդրօն և Երեանց մանր չարչի վաճառական-Գեդէոն Ահարոնեան: Սրանք իրանց հնաւանդ մանր բուրժուական մորթին պատուելով, մշակականութեան ազդեցութեան տակ նոր զգեստ էին հագած:

Պէտք է արդարը խոստովանել. Արծրունու մշակականութիւնը իր ժամանակին կատարեալ ճահճային հայկական միջավայրում ուժեղ, սթափեցնող մի հոսանք գարձու:

Մինչդեռ մեղուականութիւնը պաշտպան էր հանդիսանում հին կուռքերի գոյութեան, մշակականութիւնը կործանում էր այդ կուռքերը: Մինչդեռ մեղուականութիւնը ժողովրդի բախտի դեկր յանձնում էր բացարձակապէս կղերականութեան և նրա հիմնարկութիւնների տնօրէնութեան, մշակականութիւնը որոշ դեր էր տալիս ժողովուրդի ինքնագործութեան և պահանջներ զնում, որ ժողովուրդը ինքը վերահասու լինի իր գործերին:

Որպէս ազգային միութեան դրօշակակիր՝ մշակական կուսակցութիւնը, որքան այդ կարելի է տեսնել նրա հիմնադրի գաղափարական ընդհանուր ուղղութիւնից, ունէր իր ազգային քաղաքականութիւնը: Արծրունին և „Մշակը“ տաճկահայ ռեֆորմիների և խնդրի ամենաջերմ պաշտպաններից էր: Արծրունու միջամտութիւնը և ազդեցութիւնը տաճկահայ կուլտուրական գործերի վրայ մեծ է եղել: Համարձակ կարելի է ասել, որ „Մշակը“ և Արծրունին են եղել մեր յայտնի վիպասան Բաֆֆուն ներշնչող և ուղղութիւն սուղը: Լեզալ կուլտուրական գործունէութիւն—անա „Մշակի“ և Արծրունու սիրեցեալ ասպարէզը: Արծրունու բողոքող ոչին երբէք չի դուրս եկել լեզալիզմի սահմաններից:

Թէև Արծրունին որպէս ազգային լիբերալ բուրժուազիայի իդէոլոգ՝ արտայայտւել է սոցիալիզմի դէմ, որի մասին նա ի հարկէ չափազանց աղօտ գաղափար ունէր:

բայց և այնպէս կամայ ակամայ իր գործունէութեամբ հարթում էր ճանապարհը նոյն այդ սոցիալիզմի համար: Մի շատ կարևոր պատմական իրողութիւն պէտք չէ այստեղ մոռանալ. մշակականութիւնը ունեցաւ իր աջ և ձախթիւր... Նրա աշակողմեան թիւը լեզալ-կուլտուրական հոսանքն էր ներկայացնում. ձախակողմեան անլեզալ յեղափոխական քաղաքական թիւը կազմեց հենց նոյն իսկ Արծրունու կենդանութեան ժամանակ հիմնաւծ Դաշնակցութիւնը: Դաշնակցական կուսակցութիւնը կազմակերպեց Արծրունու մշակականութեան, Բաֆֆու, Գամառ-Քաթիպայի գաղափարականութեան և մի յայտնի չափով ուսական սոցիալիստ-նարոզնիկական հոսանքների պոքեղ ազդեցութիւնների տակ: Ահա այդ սկզբնական ամալգամից կազմեց այն կուսակցութիւնը, որը յայտնի է այսօր հայ իրականութեան մէջ „Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն“ անունով:

Մեղուական—նոր-դարական և մշակական կուսակցութիւններից բացի՝ չեմ ուզում երկար կանգ առնել և խօսել մի ուրիշ ուղղութեան մասին, որը ներկայացնում էր Աբգար Յովհաննիսեանը իր „Փորձ“ և „Արձագանք“ պարբերական օրգաններով:

Դա չափաւոր լիբերալ մի ուղղութիւն էր, որ արտայայտում էր շատ սահմանափակ շրջաններում: Դա, կարելի է ասել, մեղուականութեան և մշակականութեան միջին դիրքն էր պահպանում: Հայ կղերականութեան բիւրոկրատիզմի, խոշոր բուրժուազիայի, մեծանուն հին հայ ազնւականութեան շատագով և պաշտպան և հայ սալոնական կեանքի և գրականութեան սիրահար Աբգ. Յովհաննիսեանի ուղղութիւնը, որ ուղղութիւն էլ չէ կարելի ասել բառիս բուն նշանակութեամբ, երբէք չզարգացաւ, չծաւալեց. նա, ինչպէս ծնւեց, այնպէս էլ մեռաւ անփառունակ և անժառանգ:

V.

Այժմ թոյլ եմ տալիս ինձ մի քանի տեղեկութիւններ տալու այն փոքրիկ, աննկատելի հոսանքի մասին, որը 70-ական թւականների վերջում և 80-ականի սկզբում զարգացման նորմալ պրոցեսի մէջ էր մտել մեր իրականութեան մէջ և որը ես անւանեցի նարոզնիկական-սոցիալիստական:

Այդ ուղղութիւնը, ինչպէս ասացի, թէև աննկատելի էր, բայց նա մի որոշ կնիք է դրել մեր հասարակական զարգացման պատմութեան վրայ. բացի դրանից՝ նա աւելի հետաքրքրաշարժ է հայ յեղափոխական սոցիալիստական խմբերի համար, որովհետև աւելի ազդակից և աւելի մօտ է նրանց սրտին: Մեր կովկասեան իրականութեան մէջ— ես ի նկատի ունեմ գլխաւորապէս հայկական միջավայրը— այդ ուղղութեան արտայայտումները պէտք է վերադրել ի հօրկէ ուսական գրականութեան և յեղափոխական շարժումների ազդեցութեան: Այդ նարոզնիկ սոցիալիստական տրամադրութիւն և մտածելակերպ ունեցող անհատները և այն խմբակը, որը ես ի նկատի ունեմ, ինտելիգենտ խաւերից էին ծագում:

Ռուսական 70-ական թւականների նարոզնիկական շարժումը և նարոզովութեան և այլ յեղափոխական խմբերի գործունէութիւնը ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւն էին թողել հայ նարոզնիկների վրայ: Ես արդէն սկզբում յայտնեցի, որ թէ ուսանողութեան և թէ որոշ ինտելիգենտական խմբերի նեղ, սահմանափակ շրջանների վրայ ուսական գրական-յեղափոխական (լեզալ թէ անլեզալ) հոսանքների ազդեցութիւնը նկատելի էր մեզանում հենց մշակական կուսակցութեան կազմակերպման սկզբնական շրջանում (70 թւականների վերջերը): Ռուսականաւոր գրող և գործիչներ՝ Չերնիշևսկի, Դոբրոլիբով, Միրտով (Լաւրով) և այլն անյայտ չէին նրանց:

Միւս կողմից պէտք չէ մոռնալ և Միքայէլ Նալբանդեանին, որը լինելով մեր նորագոյն պատմութեան մէջ սոցիալիստական ուղղութեամբ առաջին գործը և գործիչը, մի յայտնի ազդեցութիւն է գործել հայ փոքրամիլ նարոզնիկներէ վրայ իր քննադատական, կրակոտ ու շանթաւար գրածքներով:

Ինչ էր այդ նարոզնիկներէ ուղղութիւնը, ինչ տենդենցներ էին արտայայտում նրանց յեղափոխական-հասարակական գործունէութեան մանկական առաջին քայլերում:

Որոշ քաղաքական ծրագիր, սիստեմատիկ, համաշարք գործունէութիւն, կազմակերպչական սերտ միութիւն դուք ի հարկէ չէք կարող գտնել նրանց մօտ և այդպիսի պահանջներ անել նրանցից՝ այն ժամանակեայ քաղաքական և անտեսական պայմաններում կարելի չէ: Հարցը միայն նրանումն է, որ իր ժամանակեայ համար ամենարդիւիւյ մտքեր և ձգտումներ կարող էիք գտնել միայն այդ ուղղութեան պատկանող այս կամ այն անհատի մէջ: Սոցիալիստական ուղղութիւն այնպէս, ինչպէս այժմ հասկացում է, բացակայում էր բնականաբար նրանց աշխարհայեցողութիւնից: Ժողովրդական լայն խաւերի շահերին ծառայել, գործել արհեստաւորներէ շրջաններում, գիւղերը գնալ և զլլաւորապէս գիւղացիութեան շարքերում կենարոնացնել կուլտուրական, հասարակական գործունէութիւնը—անհա ընդհանուր առումը այն հիմնական տենդենցիան, որին հետամուտ էին հայ նարոզնիկները: Եւ պէտք է ասել, որ այս անունը նրանք իրանց երբէք չեն տւել և ոչ էլ յայտնի են նրանք այդ անունով մեր պատմութեան գրողներին: Եւ ինքս թոյլ եմ տալիս ինձ այդ անունով ընտրուելու այդ ըստ երևոյթիւն աննշան ուղղութիւնը՝ տարբերելու համար այդ ժամանակեայ միւս հասանքներից: Հայ նարոզնիկութիւնը երբէք ուստական 70 ակթեականների նարոզնիկութեան թէ ընդհանուր ուղղութեան և թէ նրա գարգացման աստիճանի չհասաւ, երբէք

մենք չենք տեսնում մեզնում այն բնաւորութեամբ, այն չափով ու ձևով նարոզնիկական մի հոսանք „դէպի գիւղ“, ինչ որ տեսնում ենք 70-ական թեականների ուստական ինտելիգենցիայի կեանքում. բայց վերջինին նմանողութիւնը, հետևողութիւնը թէկուզ հենց սահմանափակ շրջանակներում, անհերքելի իրողութիւն պէտք է համարել նաև մեր կեանքում: Նարոզնիկութիւնը արտայայտւում էր ոչ թէ որոշ անհատների կամ խմբակի մէջ, այլ նոյն իսկ մշակականութեան մէջ: Արծրունու „Մշակ“-ը մի դուրս քարոզում էր ու կոչեր էր ուղղում մեր ինտելիգենցիային—ուսուցիչներին, հողաւորականներին, բժիշկներին, գիւղատնտեսներին և այլ ազատ մասնագէտներին՝ գնալ գիւղերը և նւիրել գիւղացիութեան կուլտուրական և հասարակական գարգացման գործին: Ստեփան «Մշակի» նարոզնիկութեան պրոպագանդը ի նկատի է ունեցել միշտ խաղաղ, կուլտուրական գործունէութիւն լեզու սահմաններում: Մինչդեռ ուստական յեղափոխական շարժումներով ներշնչւած մի քանի հայ նարոզնիկները՝ բացի լեզուից հետամուտ էին և անլեզու յեղափոխական գործունէութեան. նրանք կանգնել էին յեղափոխական տեսակէտի վրայ և իրանց քայլերը արդէն ուղղել էին դէպի յեղափոխական գործունէութեան ասպարէզը:

Ասացի սոցիալիզմ չկար բառիս գիտական նշանակութեամբ նրանց մտածողութեան և առօրեայ քայլերում, բայց գեմոկրատիզմը—այս,—նոյն իսկ իր արմատական ձևերով, կազմում էր նրանց ուղղութեան էութիւնը:

Նախ քան այդ խմբակի և նրա տյս կամ այն անգամի մասին մի քանի տեղեկութիւններ տալը՝ ես կուզէի մատնանշել մի երևոյթ, որը ի հարկէ յատուկ չէ միայն հայկական միջավայրին, այլ և միւս ժողովուրդներին, թէկուզ հենց մեր հարևան վրացիներին:

Ժողովրդական կեանքի մի քանի տասնեակ տարիներէ, եթէ չասենք, դարուոր պատմաշրջանում, երևացել են մէկ մէկ արտակարգ, արտասովոր հակումներով ան-

հատներ, որոնց ժամանակակիցները չեն ճանաչել, ցնորամիտ, հիւանդ, խենթ են համարել և հալածանքի ենթարկել...

Մի քանի տասնեակ ափրիներ են անցնում, որ հազիւ ժողովրդական կեանքի հորիզոնի վրայ յայտնուում են մի-մի Միքայէլ Նալբանդեաններ: Վրաց ժողովրդական յայտնի գործիչ և գրող Նինօշիլու Նման, որ ծնունդ էր աւելի մեզ մօտիկ ժամանակների (80—90 թւականներէ), հայկական իրականութիւնը անցեալում ունեցել է նոյնպէս իր «տարօրինակ, խենթ» գործիչները. նրանք իրենց իդէալիզմը չհիմնելով կեանքի ուէալ; օրէկապիւ պայմանների վրայ, անհետ և անյիշատակ կորել են կեանքի մէջ...

Զիտուելով ամենքին յայտնի Միքայէլ Նալբանդեանի մասին, որը մի առանձին և որոշ մեծութիւն է ներկայացնում մեր կեանքի սօցիալիստական պատմութեան մէջ, ես կը յիշեմ մի անձնաւորութեան մասին, որը կարող է թերեւ ժպիտ առաջ բերել նրանց մէջ, որոնք դեռ կենդանի են և ծանօթ են եղել նրա հետ, բայց և որին, որքան ես նրանից իր ժամանակին տպաւորութիւն եմ ստացել, պէտք է համարել նոյնպէս անարթօտական — սօցիալիստական հակամարտի մի «խենթ»: Այդ անձնաւորութիւնն է շուրաւերցի Գրիգոր Տէր-Մելիքսեդեանը:

Ես դեռ սեմինարիստ եղած ժամանակ առիթ եմ ունեցել ծանօթանալու նրա հետ: Նա մեռաւ 80-ական թրւականների սկզբում սովի, ծայրայեղ չքաւորութեան և հիւանդութեան ճիրաններում թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում:

Նա, ինչպէս նրա խօսքերից երևում էր, ւարդացել Գրուզոնի այս կամ այն գրւածքը և գլխաւորապէս նրա „La propriété c'est le vol“ («Սեփականութիւնը զողութիւն է») յայտնի աշխատութիւնը. նա Գրուզոնի աշակերտն էր և սիրահարը: «Անմահ Գրուզոն, անմահ Գրուզոն», բացականչում էր նա յաճախ. նա նոյնպէս սիրում էր բնագիտութիւնը. ծանօթ էր նոյնպէս Բիւխների

Լայտնի «Ոյժ և Նիւթ» վիլիսոփայական գրւածքի հետ: Համոզմունքով աթէիստ էր. նա յայտնում էր, որ ինքը բուն ցանկութիւն ունի նւիրել իր մահից յետոյ իր կրմախքը որեւէ դպրոցին և խնդրում էր ծանօթներից սրան կամ նրան կատարել իր այդ կտակը:

Գր. Տէր-Մելիքսեդեանը ուսել է Ներսիսեան դպրոցում որպէս գիշերօթիկ. շարութեան և անհնազանդութեան պատճառով դուրս են արել դպրոցից: Նա, տեղ չունենալով գիշերելու համար, խնդրում է մի հացարարի իրեն ընդունել մի քանի օրով գիշերելու. նա միւլենոյն ժամանակ օգնում է եղել հացարարին. շատ հաց ուտելու պատճառով հացթուխը բարկանում է մի անգամ նրա վրայ ասելով — „Տօ, քիչ կի (կեր)“: Այդ պատճառով էլ Գր. Տէր-Մելիքսեդեանը յայտնի էր ծանօթ շրջաններում «Քիչկի» անունով: Մի քոյր ունէր Շուրաւերում, որի համար յաճախ գնում գալիս էր օտով: Մի անգամ Շուրաւերի եկեղեցում ծիսակատարութեան ժամանակ մի կողմը քշելով տիրացուներին, որոնք նրա ասելով վատ և յիմար բաներ էին երգում, կանգնում է նրանց դասում և Նալբանդեանցի «Աղափն Աստուած» է երգում. մեծ յուզում տէրաւորների և ժողովրդի մէջ, որից յետոյ նա թողնում, հեռանում է եկեղեցուց: „Տէրաւորները ինձ չեն սիրում և հալածում են, ասում էր նա, որովհետեւ անասուած են համարում ինձ և որովհետեւ մի անգամ եկեղեցում „Աղափն Աստուած“ եմ երգել»:

Իրաւ, տարօրինակ մարդ էր պարոն Գրիգորը: Նա մի թերթ էր հրատարակում «Աշխատանք» անունով. խրմբապիւ մարդ էր: Մի անգամ գնացի մօտը, խմբագրական գրասենեակը (որը միւլենոյն ժամանակ իր բնակարանն էր), որը գտնուում էր Թամաշի բարանտարայի ամենավերին յարկում: Եւ ինչ տեսնում. սենեակը դասարկ առանց որեւէ կահկարասիքի, փալասներ ու թղթեր դէս-դէն թափթփած, ինքը պառկած երեսի վրայ յատակին, թուղթը առջևը՝ թերթի համար առաջնորդող էր գրում... Պա-

րոն Գրիգոր, ասում եմ ես, բա դուք մի սեղան և աթոռ չունէք, որ այդ անյարմար դրութեան մէջ էք գրում»:

— „է՛հ, եղբայր, հացի փող չեմ կարողանում ճարել, սեղան ու աթոռ էք հարցնում“:

Սակայն նրա այս առարկութիւնը անհիմն էր. անհասարատի էր, որ մի մարդ, որ թերթ էր հրատարակում և ծախքեր հոգում դրա համար, չկարողանար և մի աթոռ կամ սեղան ճարել կամ գնել: Ինձ թւում է, որ պ. Գրիգորը թիւրիմացութեան մէջ էր, սխալ րմբռնելով մասնաւոր սեփականութեան հերքման սկզբունքը. նա չընդունելով ընդհանրապէս մասնաւոր սեփականութիւնը (աշխատանքի և արտադրութեան միջոցներ), որը աղբիւրն է հանդիսանում կապիտալիստական հարստութեան, չէր ընդունում և անձնական և ընտանիքի ամենօրեայ անհրաժեշտ գործածելիք առարկաների — կահկարասիքի, զգեստի և այլն մասնաւոր սեփականութիւն: Նա թերևս այդ պատճառով գրեթէ ցնցոտիների մէջն էր ման գալիս և անփոյթ էր առհասարակ իր անձի վայելչութեան և բարեկեցութեան հարցի վերաբերմամբ: Քիչ չեն պատահում կեանքում այնպիսի սարսաղներ, որոնք կործում են թէ ինչքան աւելի անփոյթ և վատ հագնւեն և կամ ուտեն, ինչքան աւելի խեղճ նիստ ու կացի մէջ ապրեն և զրկեն իրենց կուլտուրական բարիքներից, նոյնքան էլ աւելի կը մտանան իսկական գեմոկրատի կամ սոցիալիստի կեանքին: Այս միջնադարեան ջրիտոնէական-կրօնական ինքնուրացման և ինքնագրկման իրատեսակ և տարօրինակ սոցիալիզմը հաւանութիւն է գտնում ի հարկէ առաւելապէս բուրժուազական քան այլ շրջաններում:

Այս պակասութիւնն ունէր և պ. Գրիգոր Տէր-Մելիք-սեղեանը: Նա, ինչպէս ասացի, խմբագիր էր և հրատարակում էր 70-ական թւականների վերջում „Աշխատանք“ թերթը: Ես պատանի էի այդ ժամանակ և չեմ յիշում թէ 40 տարի առաջ ինչ էր նա գրում:

Հետաքրքրական է գտնել և բրբրել այդ համարները,

տեսնել թէ ինչ է նրանցում գրւած: Նրանց գտնելը երեւի շատ դժւար կը լինի այժմ. թերևս նրանց կարելի լինի գտնել „Кавказск. публ. библиотека“-ի արխիւում, որի գոյութեան կամ չգոյութեան մասին ինձ այժմ ոչինչ յայտնի չէ:

Որքան էլ անյայտ և աննշան անձնաւորութիւն լինէր Գրիգոր Տէր-Մելիքսեղեանը իբրև գործիչ և գրող, բայց նրա Պրուդոնի հետևող և աշակերտ լինելու հանգամանքը անցեալ դարու 70-ական թւականներին՝ հայ սոցիալական կեանքի պատմութեան և թէ մեզ սոցիալիստներին համար առանձին հետաքրքրութիւն և արժէք է ներկայացնում:

Վերագոռնանք այժմ կրկին հայ նարոզնիկներին:

VI.

Նարուզնիկական խմբակը, որի կենտրոնատեղն էր թիֆլիս քաղաքը և որի այս կամ այն անգամը գաւառներն էր գնում որևէ պաշտօնով կամ գործով, շատ մեծ չէր — միայն մի քանի հոգուց բաղկացած: Ասացի, որ նրանք արդէն կանգնել էին յեղափոխական տեսակետի վերայ և անլեզալ գործունէութիւնը ճանաչել էր նրանց կողմից անհրաժեշտ: Բացի անլեզալ ժողովներ կազմակերպելը և բանաւոր պրոպագանդ մղելը, նրանք ճնարաւորութիւն էին գտնում անլեզալ թուօցիկ և կամ բրօշուր ևս հրատարակել: Յիշեմ օրինակի համար 1884—5 թ. ցարի կառավարութեան դէմ ուղղւած հայոց դպրոցների առթիվ տպագիր թուօցիկը, որը բաւական քանակութեամբ տարածւեց թիֆլիսում և գաւառներում և Միք. Նալբանդեանցի „Նրկրագործութիւն“ բրօշուրը, որը յաջողեց հեկտոգրաֆով լոյս ընծայել նոյն թւականներին:

Որպէս գործակից՝ ես շատ մօտ ծանօթ էի խմբակի այս կամ այն անդամի հետ: Նրանցից մէկի մասին ես առանձնապէս կրօզէի խօսել, որովհետեւ նա հանդիսանում է դեռ մինչև այսօր գործող հայ կուսակցութիւններից մէկի — Դաշնակցութեան — հիմնադիրը:

Այդ անձնաւորութիւնն է Խրիստաֆոր Միքայէլեանը: Մենք շատ մօտ բարեկամ և լաւ ընկերներ ենք եղել անցեալում. հնայած աֆս բանի, որ ապագայում մենք տարբեր ուղղութիւններով գնացինք, մեր բարեկամութիւնը անխախտ մնաց մինչև վերջը և մինչև այժմ էլ նրան յիշելիս անկեղծ յարգանքի զգացմունք է գարթնում իմ մէջ դէպի նրա անունը: Միւս կողմից ես իմ խղճի և համոզմունքի հակառակ գործած կլինէի եթէ չասէի նրա մասին իմ կարծիքը այնպէս, ինչպէս ես նրան ճանաչում էի և ճանաչեցի, եթէ չասէի ամբողջ ճշմարտութիւնը, որովհետև, հասկանալի է ամենքին, որ ճշմարտութիւնը ամեն ընկերական և բարեկամական հաշիւներից և զգացմունքներից վեր պէտք է դասել:

Ես ծանօթացայ Խրիստաֆորի հետ՝ Թիֆլիսում դեռ այն ժամանակ, երբ նա ուսանում էր Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում: Ինքը Ագուլեցի էր (Վերին-Ագուլիս) և դպրոցն ասարտելուց յետոյ ուսուցչական պաշտօնով հրաւիրեց նա իր հայրենի դպրոցների համար: Պրոֆեսօրայով նա ուսուցիչ-մանկավարժ էր. իսկ յետոյ 90-ական թւականներին, Դաշնակցութեան առաջին տարիների կազմակերպման շրջանում, Թիֆլիսում ապրելով՝ „НОВ. ОБОЗ.“ թերթի կորրեկտորի համեստ պաշտօնն էր կատարում:

Ես մօտ յարաբերութիւններ սկսեցի նրա հետ 1884 թւին: Այդ թւին էր թէ հետեւալ 1885 թւին—ես լաւ չեմ յիշում, Գանձակից, որտեղ ես ուսուցիչ էի, եկայ Թիֆլիս Խրիստաֆորի մօտ: Նրա մօտից ես վերցրեցի մեծ քանակութեամբ թուղցիկներ դպրոցների փակման առիթով, ինչպէս և մի քանի օրինակ Նալբանդեանի „Ներկազորութիւն“ բրօշուրից. Գանձակ տարայ թուղցիկները տարածելու համար, իսկ մի մասը ուղարկեցի Բագու: Այդ թուղցիկը խիստ յարձակողական ոճով գրւած մի գրութիւն էր՝ ուղղւած ցարի կառավարութեան դէմ՝ նրա մի բարբարոսական արշաւանքի առիթով հայ դպրոցների դէմ,

որոնց թիւը արդէն հարիւրների էր հասնում այդ ժամանակ և որոնց ցարի կառավարութիւնը վայրենաբար փակել էր:

Այդ բանից յետոյ մենք սերտ յարաբերութիւնների մէջ էինք գտնուում և ամէն անգամ, երբ պատահում էինք, խօսում էինք այն ժամին, թէ ինչպէս անել, որ նեղ շըրջանակից դուրս գալով մի քիչ աւելի ընդարձակենք մեր գործունէութիւնը: Պէտք է յիշել և այն, որ Թիֆլիսում պատահում էին մէկ-մէկ Ռուսաստանից աքսորւած ռուս յեղափոխականներ, որոնք ոստիկանական հսկողութեան տակ ապրում էին ժամանակաւորապէս: Թէ Խրիստաֆորը և թէ իմբակի այս կամ այն անգամը աշխատում էին ծանօթանալ և կոնտակտի մէջ մտնել նրանց հետ: Նրանցից երբեմն հնարաւոր էր լինում անլեզալ գրւածքներ ստանալ և ծանօթանալ ռուս յեղափոխական այս կամ այն գրողի հետ: Սա ի հարկէ շատ հազիւ էր պատահում և բացի լեզալ գրականութիւնից՝ այդ ճանապարհով բաւարար մտաւոր պաշար ձեռք բերել պատրաստւած յեղափոխական մտածող և գործիչ լինելու համար՝ անհնարին էր: Հարկաւոր էր Թիֆլիսի, ընդհանրապէս մեր երկրի նեղ սահմաններից դուրս գալ, գնալ Ռուսաստանի մայրաքաղաքները կամ արտասահման, որ կարելի լինէր մեր գիտութիւնների և ուսման ծարաւը յագեցնել, հարստացնել մեր մտաւորական պաշարը, առանց որի յեղափոխական գործիչը չէր կարող գործիչ լինել:

Որքան յիշում եմ, 1887 թւին Խրիստաֆորը գնաց Մոսկւա համալսարան մտնելու, իսկ ես մի տարի առաջ, 1886 թ. արդէն ռզնորւել էի Շվէյցարիայի Փըննե քաղաքը ուսանելու: Մինչև այդ՝ ահա թէ ինչ հանգամանք կօշմարի պէս սկսել էր ծանրանալ ինձ՝ ինչպէս և, կարծում եմ, Խրիստաֆորի վրայ: Նախ քան Խրիստաֆորի մասին լրացուցիչ տեղեկութիւններ տալը, ես մի քիչ պէտք է շեղեմ այդ հանգամանքի մասին խօսելու:

Ես արդէն յիշեցի, որ նարոզնիկական փոքրիկ, ան-

նկատելի հոսանքը զարգացման նորմալ պրոցէսի մէջ էր մտել 80-ական թւականների սկզբում. այդ ուղղութեամբ հասարակական-յեղափոխական գործունէութեան զարգացումը կարող էր ստանալ աւելի լայն չափեր, մեր ուսանայ ժողովրդի քաղաքական զարգացումը կրնիթանար միաժամանակ և գուզընթացաբար Ռուսաստանի քաղաքական կեանքի հետ, եթէ մեր կեանքի հետ անմիջական կապ չունեցող մի արտաքին զօրեղ հոսանք չյափշտակէր, չյուզէր ամբողջապէս ամենքի մաքերը, եթէ նա չկլանէր մեր ինտելիգենտական-դեմոկրատական լաւագոյն ոյժերը...

Դա այն հոսանքն էր, որ առաջ բերեց մեր մէջ „Հայկական հարցը“: Ես չեմ ուզում կանգ առնել պարզելու թէ այդ հարցը մեր ուսանայ կեանքի քաղաքական և հասարակական զարգացման նկատմամբ ինչպիսի արդելաութի, ուէակցիոն նշանակութիւն ունեցաւ, ինչպէս նա ամենքի համար օպիում դարձաւ, որի ներգործութիւնը այնքան զօրեղ է եղել, որ չնայելով վերջին 3 տասնեակ տարիների ընթացքում խոշոր դէպքեր տեղի ունեցան, մեր երկրում երկու անգամ ու սական մեծ յեղափոխութիւն ապրեցինք, բայց և այնպէս դարձեալ մեր հասարակական միտքը շարունակում է շմււած և կաշկանդւած մնալ, դեռ դարձեալ մեր դեմոկրատական աշխատաւոր մասսաների ահագին մեծամասնութիւնը շարունակում է մնալ այդ կօշմարի ճիրաններում:

Չէ կարելի ասել, որ նարոզնիկական խմբակի վրայ չէր ազդում և չէ ազդել այդ անտանելի օպիումը:

Նա ուղղակի քայքայիչ, կազմալուծող դեր կատարեց այդ խմբակի գործունէութեան վերաբերմամբ:

Չեմ կարող չխոստովանել այստեղ ճշմարտութիւնը յաւկապէս իմ վերաբերմամբ. եղել է մոմենտ իմ անհաստական կեանքում, և այդ 1884 թւականին էր, երբ ես ինձ զգում էի նոյնպէս յիշեալ հոսանքի զօրեղ ազդեցութեան տակ. և այնքան էի յափշտակել Նրկիր անցնելու գաղափարով, որ յիշեալ թւին այդ առիթով Գանձակից

նստակ գրեցի մեր երկրացի ծանօթ և բարեկամ մի անձի—Տիգրան Փիրուժեանցին, որը դրանից փոքր ինչ առաջ 3—4 ընկերներով անցել էր Տաճկաստան և ուսուցչական պաշտօն էր վարում Վանի շրջանում: Ես նրան նստակւում ինդրում էի տալ ինձ տեղեկութիւններ այնտեղի մի քանի պայմանների և թէ այն բանի մասին թէ ինչպէս անել, որ ես հնարաւորութիւն գտնեմ անցնել և գործել Տաճկա-Հայաստանում: Նրանից պատասխան ստացայ շատ ուշ, 4—5 ամսից յետոյ միայն, այն ժամանակ, երբ հանգամանքները փոխւել էին և ես արդէն վճռել էի գնալ Եւրոպա ուսանելու համար: Նա ինձ գրում էր այլաբանական լեզուով, որ ով ցանկանում է ապրել և աշխատել Տաճկաստանում պէտք գիտենայ մի արհեստ կամ որևէ պարագմունք ունենայ, այլապէս դժւար կը լինէր տաճկական իրականութեան մէջ աշխատել և նւիրւել այն գործին, որի մասին ես նրան գրել էի:

Տաճկահայկական հոսանքի ազդեցութիւնը ինձ վրայ կարճատե եղաւ. ինչպէս ասացի հանգամանքները փոխւել էին, իմ Նրկիր անցնելու էկստազը արդէն անցել էր: Թէ ինչ հոգեբանական դրութիւն ստեղծւեց ինձ անում, ինչպիսի տրամադրութիւն տիրեց ինձ այդ ժամանակ—այդ մասին ես կուզէի հաղորդել ընթերցողին ոչ թէ նրա համար, որ իմ անձնական էւոլիւցիայի հարցը կարող է հետաքրքրական լինել, այլ բացառապէս նրա համար, որ այն դրդապատճառները, հանգամանքներն ու ուղղութիւնը, որոնք նպաստեցին այդ էւոլիւցիան կատարւելուն, կարող են ուսանելի լինել: Ես ինդրում եմ ընթերցողին հաւատալ, որ ինձ միայն հարցի թէորտիկական-գիտական շահի տեսակէտը թելադրում է չափազանց զգոյշ և օրիէկտիւ լինել և տալ այդ մասին ստոյգ տեղեկութիւններ՝ առանց ենթարկւելու սուբիէկտիւ ըմբռնումների և տրամադրութիւնների մոմենտի ազդեցութեան, առանց որևէ գունաւորումների և չափազանցութեան:

Ես շատ խեղճ ընտանիքի զաւակ էի. մանկութիւնից

աղքատութիւնը և տանջանքը, ինչպէս շատ շատերի համար, եղել է և իմ կեանքի անբաժան ընկերն ու ուղեկիցը: Իմ եղբայրներից երկուսը խեղճ, գրեթէ անգրագէտ բանուորներ էին, որոնք աշխատում էին տասնեակ տարիների ընթացքում Թիֆլիսի Միրզոնների միակ մեծ կրտաւի գործարանում: Նրանց և թէ նրանց ընկերների չարչարանքն ու տանջանքը ինձ վրայ խորը տպաւորութիւն էր գործում. զգում և հասկանում էի, որ նրանք մի տեսակ գործիք էին, պարիսներ էին և այն մի քանի կուպէկների համար, որ նրանք ստանում էին իրենց ողորմելի ապրուստը հայթայթելու, օր ու գիշեր ստիպւած էին տանջել, աշխատել, ու անվերջ աշխատել...

Ես ևս ամսական մի քանի մանէթ վաստակելու համար, որոնցով հնարաւոր լինէր գնել մի գոյգ կօշիկ կամ հագուստ ինձ համար, դպրոցական ամարային ամիսների արձակուրդներին առիթ եմ ունեցել աշխատելու որպէս բանուոր այդ գործարանում: Երկու անգամ նոյն նպատակով ամարային արձակուրդներին աշխատել եմ 70 թւականների վերջին գոյութիւն ունեցող Տէր-Ասատուրովի լուցկու գործարանում (Спичечный заводъ), որ գտնուում էր քաղաքի հին „Տամոժեննայեա“ փողոցի ծայրում, Ծիրանաւորի ճանապարհին:

Այդ բանը աւելի մօտեցնում էր ինձ բանուորներին, հնարաւորութիւն տալիս ինձ աւելի մօտ ծանօթանալու նրանց կեանքի հետ:

Իմ դպրոցական աշակերտութեան շրջանում սաստիկ հետաքրքրւում էի այն անլեզու ժողովներով, որոնց Թիֆլիսի աշակերտութիւնն ու ուսանողութիւնը կազմակերպել էր քաղաքի զանազան մասերում, և որոնց մասին ես սկզբում յիշեցի. այդ ժողովներին մասնակցելը զգալի օգտակարութիւն ունեցաւ ինչպէս ինձ, այնպէս էլ շատերի համար:

Այն ժամանակ և թէ դպրոցն աւարտելուց յետոյ, ուսուցչական պաշտօնավարութեանս միջոցին, ես մի ա-

ւանձին ձգտում ունէի՝ ձեռք բերելու ուսու հեղինակների ոչ թէ միայն լեզու, այլ և անլեզու գրւածքները: Բացի այդ հեղինակների—Նալբանդեանի յօդւածները Հիւսիսափայլում, նրա «Երկրագործութիւնը»-ը, Բաֆֆու վէպերը, արդէն ութսունական թւականների սկզբներում ինձ յաջողել էր գտնել, և կարգաւ Չերնիշևսկու յայտնի „Что дѣлать“, Միրտովի (Լաւրովի) „Историческія письма“ անլեզու գրւածքները:

Բայց ինձ վրայ շատ զօրեղ տպաւորութիւն թողեց Լասսալի գրւածքների ուսուերէն թարգմանւած մի հատորի ընթերցանութիւնը, որը մի տեսակ հրաշքով ձեռքս էր ընկել: Գանձակի դպրոցներում ուսուցիչ եղած ժամանակս զիմնազիայի բարձր դասարանի մի զարգացած՝ Իսահակ Զուրարեան ազգանունով աշակերտի միջոցով, որի հետ արդէն Թիֆլիսից ծանօթ էի և որը այդ ժամանակ Գանձակի նահանգապետի երեխանց ընկալաւորն էր, ես կարողանում էի նահանգապետի սնային գրադարանից ստանալ արգելւած գրքեր, կարգաւ և վերագարձել: Ահա այդ արգելւած գրքերի թւումն էր և Լասսալի յիշեալ աշխատութիւնը: 1885 թւի ամառը Գանձակի գաւառի գիւղերով մի պտոյտ անելուց յետոյ՝ մնացի մօտ մէկ ու կէս ամիս Նիւզգար գիւղում. մեր «Մայրենի լեզու» հեղինակ Նիկողայոս Տէր-Ղևոնդեանի ծննդավայրն է այդ գիւղը. այդ ամառը նա էլ իր ընտանիքով այդ գիւղում էր անցկացնում:

«Նիկոլի» աղբիւրի մօտ նստած կարդում էի սիրուհու նաւանկի պէս Լասսալը:

— Այդ ի՞նչ էք կորդում, լսում եմ յանկարծ և տեսնում գլխիս կանգնած Նիկ. Տէր-Ղևոնդեանին:

— Կարդում եմ Լասսալը, պատասխանեցի ես:

— Լասսալ. ի՞նչպէս գտաք, չէ՞ որ արգելւած է, յայտնում է նա կարծես մի տեսակ այլայլւած:

— Գիտեմ, արգելւած է, գտայ և կարդում եմ, պատասխանեցի ես:

Նա շուտ հեռացաւ. և ուրախ էի, որ շուտ հեռացաւ: Կրկնում եմ, Լասսալի գրւածքի ընթերցանութիւնը ինձ վրայ ցնցող տպաւորութիւն թողեց:

Շատ վաղ հասակից իմ չքաւորութեան և զրկանքների անձնական ապրումները, անլեզալ ժողովներին և խմբերին մասնակցելը, բանւոր եղբայրներիս տանջանքները, բանւորութեան կեանքի հետ շփումն ու ծանօթութիւնը թիֆլիսում, Բագուում և Գանձակի Գետաբէկի Սիմեոսի պրոնձահանքում, անլեզալ յեղափոխական գրականութեան և մանաւանդ Լասսալի հետ ծանօթութիւնը—ահա նախադրեալները (предпосылки) այն ուղղութեան, որին ես յարել եմ անդառնալի կերպով—ահա մօտ 30 տարի—սկսած 1886—7 թւականներից: Ինչպէս վերը յիշեցի, 1886 թւի ամառը զնացի նախ Փրանսիա և յետոյ անցայ Շվեյցարիա ժրնե քաղաքում ուսանելու:

Այդ թւին յաճախ սկսեցի թղթակցել Արժրունու „Մշակ“-ին, առանձնապէս ուշադրութիւն դարձնելով բանւորական հարցի և դրութեան մասին եւրոպայում:

Սոցիալական գիտութիւնների ուսումնասիրութիւնը համալսարանում և Մարքս-էնգելսեան մատերիալիստական փիլիսոփայութեան և գիտական սոցիալիզմի հետ ծանօթութիւնը հնարաւորութիւն տւին ինձ հաստատուն և անշեղ կերպով կանգնելու սոցիալիստական-յեղափոխական գործունէութեան ճանապարհի վրայ:

1889 թւի սեպտեմբերին վերադարձայ թիֆլիս, ուր հանդիպեցի նորից Խրիստաֆոր Միքայէլեանին. նա էլ նոր էր եկել Մոսկուայից. ես նրան տեսայ բաւականին փոխւած և ուրիշ ուղղութեամբ տարւած:

Այդ մասին կլինի այժմ իմ խօսքը:

VII

1889 թւի ուսումնական տարւայ սկիզբն էր: Խրիստաֆորը աւագ ուսուցչի պաշտօնով հրաւիրւել էր իր

ծննդավայր Վերին-Ագուլիսի դպրոցների համար. նա ուսուցչական խումբ էր կազմում թիֆլիսում: Արտասահմանից ես վերադարձել էի բոլորովին քայքայւած առողջութեամբ: Բժիշկների խորհրդով անհրաժեշտ էր մի առժամանակ հանգստանալ որեւէ գիւղում: Խրիստաֆորը առաջարկեց ինձ գնալ իրան հետ Վերին-Ագուլիս: Սկզբում ես մերժեցի, ի նկատի ունենալով Վերին-Ագուլիսի հեռաւորութիւնը թիֆլիսից և ուսուցչական ծանր գործը, որը կարող էր աւելի ևս վատթարացնել առողջութիւնս: Խրիստաֆորը առանձնապէս պնդում էր ընդունել իր առաջարկը, յայտնելով որ ինձ կտան շատ քիչ թւով դասեր, որոնք չէին կարող ծանրաբեռնել ինձ: Ես տւեցի իմ համաձայնութիւնը. ուղևորեցինք միասին Վերին-Ագուլիս: Այդտեղ մի ամբողջ տարի և թէ յետոյ զանազան ժամանակներում մենք առիթ ենք ունեցել շատ անգամ մշտքերի փոխանակութիւն ունենալ զանազան հասարակական, քաղաքական և ազգային թեմաների վերաբերեալ: Արտասահմանից վերադառնալուց յետոյ ես արդէն զգացի և հասկացայ, որ մենք չափազանց հեռացել ենք միմեանցից: 1885—6 թւականներին ես արդէն նկատել էի, որ Խրիստաֆորի տրամադրութիւնն և մտածողութիւնն սկսում էր պաշարել «Հայկական հարցը» իր պատմական զիպլոմատական ուղղութեամբ:

Այժմ արդէն—1889 թւին—նա դարձել էր նրա բովանդակ հոգսը, նրա idee fixe-ը, նրա հաւատամքն ու իրէջալը: Նա ընդհանրապէս դժգոհ էր հայ գործիչներից, հայ ինտելիգենցիայից, որ Բագու էր փոխաշում և կենտրոնանում. դժգոհ էր և Արժրունու «Մշակ»-ից, դժգոհ էր հայ ազգի բոլոր դասակարգերից և այլն, որոնք, ինչպէս նա ասում էր, ընդհանրապէս մամոնայի ճանապարհը բռնած, գծուծ շահադիտական հաշիւների յետևից են ընկնում, չհետաքրքրւելով և չտեսնելով ազգի վրկութեան միակ մեծ հարցը: „Ազգային համերաշխութիւն“, „կենդանի ոյժերի“ միութիւն ազգային մեծ դատի համար—

անա թէ որն էր ըստ Խրիստափորի այն առաջնակարգ պահանջը, որը դրել էր ամենքի առաջ ժամանակակից ազգային կեանքի և պատմութեան մոմենտը: Ճիշտն ասած՝ ես այժմ աւելի լաւ էի հասկանում Խրիստափորին, քան թէ կարող էի նրան հասկանալ մի քանի տարի առաջ: Նա ցոյց էր տալիս, որ նոր բաներ է հաղորդում, մինչդեռ նրանք հին և ծանօթ խօսքեր էին: Նա այժմ գործում էր ինձ վրայ զուտ «իդէալիստ»-ի տպաւորութիւն լիբերալիզմի ահագին դողով: Երբ նրան հակաճառում էի թէ մեր երկրում, Կովկասում, Ռուսաստանում պահանջ էր ստեղծւել արդէն քաղաքական-յեղափոխական գործունէութիւն զարգացնելու, որի թոյլ քայլերը արդէն սկսել էր նարող-նիկական խմբակը 80-ական թւականների սկզբին, նա յայտնում էր, որ այժմ մեր ամենամեծ ուշադրութիւնը և ջանքերը պէտք է ուղղել „հայկական հարցի“ լուծման նպատակով գործին, որ այդ կնդրի լուծումից է կախած մեր գոյութիւնը, մեր ապագան: Երբ ես փորձում էի դարձնել նրա ուշադրութիւնը սոցիալական խնդրի վրայ, որը ժամանակակից քաղաքակրթութիւնը հերթական էր դարձրել, որը ընդգրկում, ամփոփում է իր մէջ միւս հասարակական, քաղաքական և այլ հարցերը և որի լուծումը ենթադրում է և ազգային-կուլտուրական պահանջներին կատարեալ բաւարարութիւն տալու անհրաժեշտութիւնը, երբ մանաւանդ խօսք էր բացւում մեր երկրում ծնող և կազմակերպող հայ բանւորութեան, դասակարգային կուլի սկզբունքի մասին, նա այդ դէպքում, իրան յատուկ մանկական—նայիւ ժպիտով պատասխանում էր, թէ մեր կեանքը պատրաստի հող չունի այդ հարցերի համար, որ բանւորութիւն չկայ մեզանում եւրոպական մարով և այլն: Նա չէր կարողանում մարտել մանաւանդ դասակարգային կուլի սկզբունքը, որի վերաբերմամբ նա բոլորովին թիւր հասկացողութիւն ունէր: Մինչդեռ յայտնի է, որ այդ սկզբունքն է կազմում սոցիալիզմի հիմնաքարը:

Նա հայ բանւորութեան գործադուլներին մասնակցելուն դէմ էր արտայայտւում, և արտայայտւում էր ոչ թէ նրա համար, որ սկզբունքով դէմ էր, այլ որովհետև հայ մասսաների մասնակցութիւնը դասակարգային կուլի կովկասում և ընդհանրապէս ռուսահայ հողի վրայ, կարող էր, նրա կարծիքով, դարձնել նրանց ուշադրութիւնը դէպի այլ կողմը, շեղել նրանց այն հարցից, որը զբաղեցնում էր ամբողջ ազգին:

Զարմանալի մի յատկութիւն ունէր Խրիստափորը. նա մագնիսի պէս մի տեսակ ձգողական ընդունակութիւն ունէր՝ դէպի իրան դրաւելու ամեն տեսակ անձանց և անհատներին: Նա անտարբեր էր դէպի ուղղութիւնները, նա խորութիւն չէր դնում ամենեկին մարդկանց մէջ. բաւական էր, որ նրանք կարող էին որևէ կերպ օգտակար լինել և ծառայութիւն մատուցանել այն գործին, որին ամենքը նւիրւած պէտք է լինէին:

Յայտնի է, որ Դաշնակցութիւնը հենց նրա կենդանութեան օրով սոցիալիստական էր իրան յայտարարում, մինչդեռ նրա շարքերում գործողները սոցիալիստներ չեն եղել*) և թէ ընդհանրապէս նրա սոցիալական կազմը բազկացած չէ եղել ամենեկին սոցիալիստական տարրերից, բառիս դիտական նշոնակութեամբ:

Խրիստափորը յաճախ գործ էր բռնում ոչ թէ դեմոկրատ անձանց, այլ և լիբերալ, նոյն իսկ շատ չափաւոր ուղղութեամբ անհատների հետ:

Սաշատուր Մալումեանը, որը Արժրուհու աջ բազուկն էր հանդիսանում և սնւել ու կրթւել էր մշակական լիբերալիզմի շիւլայում, երբէք սոցիալիստ չէ եղել, քայց և այնպէս Խրիստափորը նրան հրաւիրեց արտասահման և նա դարձաւ այնուհետև վերջինիս աջ թիւր, «Դրօշակ» թերթի և կուսակցութեան գլխաւոր ղեկավարներից մէկը:

*) Բացի այս կամ այն եզակի անհատներից, որոնց էկլիկտիզմը յարմար ու պատշաճ տեղ է գտել միայն դաշնակցութեան մէջ:

Պ. Տիգրան Յովհաննիսեանին, որը յայտնի է եղել անցեալում իր չափաւոր լիբերալ ուղղութեամբ և, որքան ինձ յայտնի է, երբէք դաշնակցական չէ եղել, Խրիստաֆորը հրաւիրել էր ժընև կուսակցութեան կենտրոնական օրգան «Իրօշակի» խմբագրի պաշտօնով:

Այս և այլ նման օրինակները ապացուցանում են միայն այն, ինչ որ արդէն վերը յայտնեցի Խրիստաֆորի դէպի անհատներն ու ուղղութիւնները անխտիր վերաբերմունքը: Իսկական քաղաքական գործիչ դեմոկրատի, էլ չեմ ասում սոցիալիստի համար, մի այդպիսի անխտութիւն անթոյլատրելի է: Խրիստաֆորը չէր նկատում իր այդ պակասութիւնը և հաշիւ էլ չէր տալիս իրան, որ այդ բանը կարող էր ունենալ հենց դաշնակցական կուսակցութեան շահի տեսակէտից անցանկալի հետեանքներ:

Որքան էլ նա բնաւորութեամբ զիջող, յարմարւող ժարդ էր, այնքան էլ յամառ և տոկուն էր աշխատանքի մէջ: Կեանքի մէջ քիչ եմ պատահել Խրիստաֆորի պէս աշխատանքին ու գործին ամբողջապէս նւիրւած մարդկանց: Նրա մեծ առաքինութիւններից մէկն էլ նրա հենց այդ օրինակելի աշխատասիրութիւնն էր և անձնւիրութիւնը գործին— լինէր նա կուսակցական, հասարական, թէ մանկավարժական:

1889—90 թւի ամբողջ ուսումնական տարին մնացինք Վերին Ազուլիսում միասին գործելու: Ես չփոշմտնեցի ընդունելով Խրիստաֆորի ինձ առաջարկած ուսուցչական պաշտօնը. շուտով առողջութիւնս կազդուրւեց և՛ որ գլխաւորն էր՝ լաւ ուսուցչական խումբ ունէինք: Մեզ հետ էր ի միջի այլոց Գարեգին Խաթալեանը, որը դարձաւ յետոյ աչքի ընկնող դաշնակցականներից մէկը. նա նոր էր աւարտել ձեմարանի 6-րդ դասարանը և պաշտօնավարում էր առաջին տարին:

Իմ թեմայից դուրս է տալ տեղեկութիւններ այն մասին, թէ ինչպէս այդ ուսումնական տարին անցկացրինք Խրիստաֆորի հետ: Կասեմ միայն այն, որ դպրոցական

պարապմունքներից դուրս խումբը կազմակերպել էր հայ և թուրք աշխատաւորների համար երեկոյեան դասընթացներ. անգրագէտներին ուսուցանում էինք գրագիտութիւն, իսկ գրագէտներին աւանդում էինք դպրոցական բոլոր առարկաները: Բացի գրանից՝ օրիորդաց բարձր դասարանների աշակերտուհիների համար՝ երբեմն խումբը մատչելի դասախօսութիւններ էր կարգում այնպիսի նիւթերի վերաբերեալ, որոնք զարգացուցիչ և օգտակար կարող էին լինել իգական սեռի մատաղ սերունդի համար: Այդ դասախօսութիւններին ներկայ էին լինում և ծնողներից մի քանիսը, այս կամ այն հոգաբարձուն և կրօնուսոյց տէրտէրը. այս վերջինները աւելի շուտ կոնտրոլի համար էին ներկայ լինում, քան թէ մի նոր ուսանելի բան լսելու համար: Շատ լաւ յիշում եմ. երբ ես մի անգամ դասախօսելիս տէրտէրի ներկայութեամբ «նախապատմական մարդու կեանքի զարգացման ֆազիսների» մասին՝ պարզում էի աշակերտական աուդիտորիայի առաջ գիտութիւնից այնպիսի տարրական բաներ, որոնք հերքում են աշխարհիս ստեղծագործութեան բիբլիական սխեման, մօտեցաւ ինձ Խրիստաֆորը և ականջիս փսփսաց. «խօսիր ազատ, առանց քաշելու»:

Իմ դասախօսութիւնը դուր չեկաւ ի հարկէ տէրտէրին. նրա և հոգաբարձութեան շրջաններում սկսեցին ինչ-որ շուկներ ու մութ ակնարկներ «անկրօնութեան» և «անասաւածութեան» մասին: Բայց մութ հոգիների այդ շուկները ոչ մի նշանակութիւն չէին կարող ունենալ, որովհետեւ ուսուցչական խումբը ջերմ համակրութիւն էր վայելում հասարակութեան կողմից:

Յիշեմ մի միջադէպ. այդ տարին լրացել էր Խրիստաֆորի մանկավարժական գործունէութեան տասնամեակը և նրա մօտ յարգողները կազմակերպեցին նեղ ընկերական շրջանում ընտանեկան հանդէս-հացկերոյթ. կարգացեցին մի քանի ստացւած շնորհաւորական նամակներ և ուղերձներ նախկին աշակերտներից: Խրիստաֆորը այն-

քան էր զգացւած ու յուզւած, որ երեխայի պէս հեկեկում էր բառիս բուն նշանակութեամբ:

Մի ուրիշ դէպք. թուրքերի բայրամն էր: Ազգերի համերաշխութեան կողմնակից լինելով՝ Խրիստափորը առաջարկեց ուսուցիչներին այցելել շնորհաւորելու համար թուրքերի հոգևոր պետին:

Ես հրաժարուեցի. միւսները Խրիստափորի հետ գնացին մոլլային շնորհաւորելու:

Ինձ տարօրինակ և անախորժ էր թւում, նկատելով որ դիրք վայելող այս կամ այն անձի կամ եպիսկոպոսին այցելում էր խումբը Խրիստափորի առաջնորդութեամբ. բացի այդ ինձ անհասկանալի էր թուրք մոլլայի շնորհաւորական այցելութեամբ ազգերի համերաշխութեան ըսկզբունքը պահպանելու ձգտումը: Այդ տեսակ հակումներ ունէր Խրիստափորը, հակումներ՝ որոնք կարող էին բնական և յատուկ լինել միայն լիբերալին:

Ուսումնական տարւայ վերջին ամիսներին Խրիստափորի անհարկներէից և խօսակցութեան տրամադրութիւնից երևում էր, որ մտադիր չէր երկրորդ տարին մնալ Վերին-Ազուլիսում:

Նա արդէն ծրագրել էր Թիֆլիսում հիմք դնել իր մէկ-երկու նոր ընկերների հետ այն կազմակերպութեան, որ պիտի ծառայէր „Հայկական հարցի“ զարգացման և լուծման գործին: 90 թւի ամառը ես ևս թողեցի Ազուլիսը և եկայ Թիֆլիս, ուր ժողովներ էին տեղի ունենում կազմակերպութիւն հիմնելու նպատակով: Մի շանի անգամ Խրիստափորը և Յովհաննէս Եոսուֆեանը առաջարկեցին ինձ մասնակցել այդ ժողովներին և նոր հիմնելիք կազմակերպութեան անդամ լինել, բայց ես բաց էի բաց մերժեցի, յայտնելով որ այն ուղղութիւնը, որին ես յարել եմ մի քանի տարից ի վեր, չէ թոյլ տալիս ինձ զբաղւելու այնպիսի հարցերով, որոնք Եւրոպական զիպլոմատիայից են սպասում իրանց լուծումը:

Վերջապէս ես արդէն այդ ժամանակ համոզուել էի,

որ թուրքահայերի ազատութեան հարցը իրենց, թուրքահայերի գործը պէտք է լինէր և ուսանողների միջամտութիւնը նրանց գործերի մէջ այն ուղղութեամբ և ձևով, ինչպէս նա զարգացում և ընթացք էր ստանում, և անօգտակար էր և անբարեբաղան թէ տաճկահայերի և թէ նոյն իսկ իրենց, ուսանողների համար:

Այդ ժամանակից յետոյ արդէն ես ու Խրիստափորը բոլորովին միմեանցից բաժանուեցինք, հեռացանք: Միայն հին յիշողութիւնների հիման վրայ պահպանում էինք մեր բարեկամութիւնը: Պատահելիս մենք խոյս էինք տալիս նոյն իսկ վիճաբանութիւնից, որովհետև զգում էինք որ ոչ մի օգուտ չէր կարող ունենալ: Վերջին անգամ, 1898 թւին, այն ժամանակ, երբ նա պատրաստում էր գնալ ժընև, պատահեցինք Թիֆլիսում: Ես նրան հաղորդեցի մի քանի տեղեկութիւններ Կովկասի բանւորութեան շարժման վերաբերեալ, Թիֆլիսում նոր-նոր կազմակերպւող սոցիալ-դեմոկրատական բանւորական խմբերի սկզբնական կազմակերպման մասին, այդ թւի Անդրկովկասեան երկաթուղային ծառայողների և բանւորների գործադուլի մասին և այլն: Ես դարձեալ շօշափեցի այդ խնդիրը, ցանկանալով իմանալ այժմ նրա վերաբերմունքը, երբ արդէն բանւորական շարժումը մեր երկրում սկիզբն էր առել և հասարակական երևոյթ էր դառնում արդէն մեր իրականութեան մէջ: Նա յայտնեց, որ իր կարծիքն այդ մասին ինձ արդէն յայտնի է և թէ ինքը այժմ, ինչպէս և անցեալում, բացասաբար է վերաբերւում դէպի այդ տեսակ շարժումները, ի նկատի ունենալով „ազգային դատ“-ի (ուրիշ խօսքով „հայկական հարցի“) շահերը:

Նա մնաս բարև ասաց ինձ, յայտնելով, որ ինքը պատրաստւում է ուղևորել արտասահման: Դա մեր վերջին հրաժեշտն էր, որովհետև մինչև մահը ես նրան այլևս չպատահեցի...

Խրիստափորը մեր իրականութեան սակաւաթիւ անձերից էր. անկեղծ, ազնիւ մի գործիչ, մի իդէալիստ, որը

ամբողջությամբ նւիրւած էր իր սիրած գործին. նա յեղափոխական էր, դեմոկրատ և, կարելի է ասել, նացիոնալ դեմոկրատ սոցիալիստական հակումներով:

Նա սոցիալիստ չէր բառիս գիտական մտքով, բայց սոցիալիստ էր նախորդնիկական մտքով (այդպէս էր նա իր գործունէութեան առաջին շրջանում), այն սոցիալիստներէց, որոնց նմաններին պատահում ենք նոյնպէս ուրիշ երկիրներում, զլիսաւորապէս Ֆրանսիայում և որոնք չընդունելով կամ նւազ նշանակութիւն տալով դասակարգային կռի սկզբունքին, ազգային մոմենտին վճռական, գերակշռող դեր են յատկացնում:

Նա արտակարգ տաղանդ և ընդունակութիւններ չունէր և այն, ինչ որ ունէր և որի շնորհիւ նա կարողացաւ հիմնել իր ժամանակին մի կազմակերպութիւն, ցոյց է տալիս, որ մեր հասարակութեան եզակի անդամներէցն էր նա: Նա ոչ հրապարակախօս էր և ոչ էլ գրող. նա միայն գրել է մի քանի յօդւածներ «Իրօշակ»-ում: Բայց նա պրակտիկ էր, լաւ պրակտիկ, գործը կազմակերպող և ընդհանրացնող:

Ինձ թուում է թէ լինէր նա կենդանի և տեսնէր իր հիմնած կազմակերպութեան վերջին տասնեակ տարիների բռնած ընթացքը, գործելակերպը և ուղղութիւնը, առաջին բողոքողը իր կազմակերպութեան դէմ կը լինէր նա՝ որպէս մաքուր և ազնիւ դեմոկրատ: Նա նոյնպէս չափազանց համեստ մարդ էր, որ բացարձակապէս իրենից վանէր այն արտակարգ յատկութիւնները, որոնք վերագրում են նրան նրա անունով երգւող նրա աշակերտներն ու հետևողները:

VIII

Մեր հասարակական-յեղափոխական հոսանքների մասին խօսելով ես յաւակնութիւն չունեմ իմ «յիշողութիւնների» մէջ նրանց պատմութիւնը ներկայացնելու: Ես

միայն անցողակի կերպով յիշատակում եմ նրանց մասին և ուրիշ ոչինչ: Այդպէս էլ ուզում եմ անել այժմ Հնչակեան կուսակցութեան վերաբերեալ: Իմ կարծիքս և տեղեկութիւնները այդ խմբակցութեան ծագման և շնչակցութեան մասին արդէն տւել եմ իմ և Սանազադի միջև տեղի ունեցած բանակում թիֆլիսում մի ժամանակ հրատարակուող «Երկրի Չայն» թերթի 1908 թւի առաջին համարներում: 1886 թւին Ֆրանսիայի Մոնպելիէ քաղաքից անցնելով ժընև (Շվեյցարիա) ուսանելու՝ ես հանդիպեցի մի քանի հայ ուսանողների, որոնց հետ ծանօթութիւնը ինձ համոզեց, որ ուսանողական երիտասարդութեան տիրել էր յեղափոխական գործունէութեան արամադրութիւն: Այդ խումբը և նրա անդամներից զլիսաւորապէս Ա. Նազարբէզը և նրա կին Մարօն գտնւում էին գերազանցապէս ռուս նարողովուեան յայտնի տերրորիստական կուսակցութեան ազդեցութեան տակ:

Նրանց համակրութիւնը այդ ժամանակ ուղղւած էր դէպի այդ հոսանքը:

Սկզբում ես բարեկամացայ այդ խմբի հետ և քանի որ խումբը նպատակ էր դրել հայերէն լեզուով մի յեղափոխական թերթ հրատարակելու, ես ամենայն ուրախութեամբ պատրաստակամութիւն յայտնեցի գործակցել նրանց և նոյն իսկ աշխատակցել թերթին: Թերթը հրատարակելու նախաձեռնութիւնը պատկանում էր Ա. Նազարբէկին և Մարօին, որոնց նիւթական միջոցներն էլ ներում էին այդ գործը զուլս բերելու: Թէև ժնկեան այդ խմբի անդամները ռուսական յեղափոխական գործիչների և գրքողների ազդեցութեան տակ էին գտնւում և իրանք էլ ռուսահայեր էին, բայց և այնպէս նրանք իրենց՝ ապագայ գործունէութեան ասպարէզը ընտրել էին ոչ ռուսահայ, այլ տաճկահայ միջավայրը: Նրանց հրատարակելիք թերթըն էլ պէտք է ծառայէր տաճկահայ յեղափոխական գործին, Տաճկա-Հայաստանի ազատագրութեան գաղափարին: «Հայկական հարցը» — ահա այն գորղեան հանդոյցը:

որը մի քանի տասնեակ տարիներ հայ հասարակական միտքն է կաշկանդել և շարունակում է կաշկանդել, և որը լուծելու համար հանդէս էր գալիս և ժընեի խումբը: Մօտ մի տարի ես սերտ յարաբերութիւնների միջ էի գտնուում այդ խմբի հետ. սակայն խմբի անդամների մէջ տեղի ունեցած տարաձայնութիւնների և մասնաւորապէս իմ և խմբի այս կամ այն անդամի հետ ունեցած անհամաձայնութիւնը և ընդհարումը անհնարին էր դարձնում մնալ ինձ աւելի երկար այդ խմբի հետ:

Իմ խմբից հեռանալուց մի քանի ամիս յետոյ միայն լոյս տեսաւ „Հնչակ“ անունով թերթի 1 համարը, որքան յիշում եմ, 1887 թւի վերջը: Այդպիսով հիմն է դրւում այն կուսակցութեան, որը յետոյ Հնչակեան անունը ստացաւ և որի բեկորներն են միայն մնացել այժմ. իսկ «Հնչակ» թերթն էլ դարձաւ ապագայում Հնչակեան կուսակցութեան կենտրոնական օրգանը:

Զնայելով որ „Հնչակ“ թերթը և նրա ղեղավարները մի քանի տարիներ ընթացքում անցան մի յայտնի էւոլիւցիոյախումբի այն մտքով, որ սկզբում իրանց ընդունած նարոզովոյեան տերրորիստական ուղղութիւնից նրանք սկսում են հեռանալ և մօտենալ աւելի սոցիալ-դեմոկրատական ուղղութեան, բայց և այնպէս „Հայկական հարցը“ մնաց մինչև վերջը նրանց *idée fixe*-ը, իսկ ազգային մոմենտը միշտ գերակշիռ դեր ունեցաւ նրանց մտածելակերպի և մտահոգութեան մէջ: Միայն 1905 — 6 թւականներին, ուստական առաջին մեծ յեղափոխութեան ժամանակ այդ խմբի անդամներից Ա. Նազարբէգը, Խանազադը և Կաֆեանը բոլորովին անջատւեցին Հնչակեան կուսակցութիւնից և միացան սոցիալ-դեմոկրատիային: Հաւատարիմ մնաց հնչակեանութեան միայն Մարօն. իսկ Խրիստ. Օհանեանը, որը նոյնպէս ժընեի խմբին էր պատկանում, հենց առաջին տարիներին թողեց Հնչակեան կուսակցութիւնը, միացաւ Դաշնակցութեան:

Այսպիսով կուսակցութեան հիմնադիր խումբը հեռացաւ իրա հիմնած կուսակցական շարքերից, մինչդեռ, կուսակցութիւնը գոյութիւն ունի մինչև այժմ, թէև միայն անունով: Նա ուշալ հող չունի իր ոտի տակ, մասսաներ չունի. դաշնակցութիւնը գրաւեց այն բոլոր տարրերը, որոնք յարւած էին „Հայկական հարցի“ ստեղծած գաղափարական հոսանքին: Հնչակեանութիւնը այժմ իրան անւանում է հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւն, մի անուն՝ որը չէ համապատասխանում ընտւ ոչ կուսակցութեան անցեալին և գործունէութեան և ոչ էլ նրա բաղկացուցիչ մասսաների սոցիալական կազմին: Նա բոլորովին պէտք է խզէ իր կապը իր անցեալի հետ հենց այնպէս, ինչպէս նրա հիմնադիրները արեցին կուսակցութեան 20 տարի գոյութիւնից յետոյ:

Ես մտադիր չեմ այժմ կանգ առնել ըննելու այն հասարակական-ազգային դերը, որ ունեցաւ Հնչակեանութիւնը մեր կեանքում: Այդ հարցի լուսաբանութիւր ես տւել եմ մասամբ յիշեալ „Երկրի Չայն“ թերթում:

Հնչակեանութիւնը, ինչպէս և Դաշնակցութիւնը, ներկայացնում են երկուսն էլ ազգային-քաղաքական հոսանքներ, որոնք թերևս անկախ իրանց հիմնադիրներէ կամքից և ցանկութիւնից՝ ընդունել են ոչ ցանկալի ուղղութիւն և զարգացում:

Ինձ թւում է թէ մեր ուստահայ հասարակական և քաղաքական մտքի նորմալ զարգացման, հայ բանւորական դեմոկրատիայի քաղաքական առաջադիմութեան առաջ ոչ մի բան այնպիսի խոչընդոտներ և դժւարութիւններ չէ ստեղծել, ինչպէս „Հայկական հարցը“ և նրա լուծման գործունէութեան հետ կապւած „հայ ազգային յեղափոխական“ կազմակերպութիւնները — Հնչակեանութիւնը և Դաշնակցութիւնը: Իրանք երկուսն էլ որպէս մի իղէայի ծնունդ, սպառել են ահագին նիւթական միջոցներ, կլանել են մեր լաւագոյն երիտասարդական ոյժերը:

Իսկ արդիւնքը... ոչնչութիւն և անմիթար վիճակ:
Շատ մեծ ջանք է հարկաւոր գործ դնել ազատելու
համար „Հայկական հարց“-ի կոշմարից:

IX

Թէ ինչպէս թանձր է եղել «Հայկական հարց»-ի ստեղծած մղձաւանջը Կովկասեան հայ իրականութեան մէջ, այդ ես անձամբ շօշափել և զգացել եմ իմ քաղաքական-յեղափոխական գործունէութեան ընթացքում: 90-ական թւականները հայկական նացիոնալիզմի զարգացման յաղթական շրջանը պէտք է համարել: Հնչակեանութիւնը և մանաւաճանդ Գաշնակցութիւնն էլ տեղ չէին թողել: Գժւար էր լինում թափանցել մասսաների մէջ առանց հանդիպելու մեծամեծ, նոյնիսկ անյաղթելի խոչընդոտների: Եղել են մոմենտներ այդ թւականներին և թէ աւելի ուշ, երբ ռուս-տաճկական սահմանազլխի հայաքնակ մասերում հայ գիւղացիք ամբողջ համայններով դադարեցրել են իրենց վարուցանքսը այն յոյսով, որ այսօր-վաղը ազատութիւն է լինելու Հայաստանում և իրանք պիտի գաղթեն վերջապէս իրենց երջանկութիւնը գտնելու հայրենի «Ազատ երկրում»: Մեր իդէալիստ ինտելիգենցիան, մեր լաւագոյն երիտասարդութիւնը, ռուսանոցութիւնը և թէ դեմոկրատիան սնւած և յափշտակւած էին Հայաստանի ազատութեան գաղափարով: Կատարեալ անապատային դրութեան մէջ էր մարդ իրեն զգում այն ամեն գէպքերում, երբ որ և է քայլ էր ուղում անել մասսաների սոցիալ-քաղաքական կրթութեան գործում, երբ խօսքից և գաղափարից գործնականին անցնելու փորձն էր կատարում՝ բանւորական և այլ դեմոկրատական խաւերի քաղաքական յեղափոխական գիտակցութեան զարգացման նպատակով համար:

Ամեն այդ տեսակ դէպքերում հանդիպում էիք շատ յաճախ ուէակցիայի և անյաջողութիւնների... Գժւարու-

թեամբ ժողով էիր գումարում բանւորներից, արհեստաւորներից կամ ինտելիգենտներից և առաջին խօսքը շատ յաճախ լինում էր այն, թէ ինչ կարծիք և վերաբերմունք ունեն սոցիալիստները կամ սոցիալ-դեմոկրատները դեպի „Հայկական հարց“: Երբ աշխատում էիր բացատրել թէ տաճկահայերի ազատագրութեան գործը իրենց տաճկահայերի գործը պէտք է լինէր, իսկ ռուսահայ բանւորութիւնը, գիւղացութիւնը և այլն իրենց քաղաքական կուսակցութիւնները պէտք է հիմնեն քաղաքական և սոցիալական ազատագրութեան նպատակներին ծառայելու համար, ըսկուում էր անմիջապէս անվերջ հակաճառութիւնը, որից յետոյ սովորաբար ժողովականները ցրւում էին, իսկ յաջորդ անգամին այլևս չէին հաւաքւում: 90-ական թւականներին լուրջ և եռանդուն փորձեր են եղել Երևանում կամ այլ հայաքնակ քաղաքներում արհեստակցական, պրոֆեսիոնալ միութիւններ հիմնել հայ բանւորներից, բայց գործը հանդիպել է անյաջողութեան և ոչ մի գրական արդիւնք չէ ունեցել: Ոչ թէ միայն 90-ական թւականներին, այլ դեռ աւելի ուշ, 900 թւականների սկզբներին, երբ բանւորական-սոցիալիստական շարժումները մի յայտնի զարգացումն էին ստացել Կովկասում, հայ ազգային „յեղափոխական“ կազմակերպութիւնները — գլխաւորապէս Գաշնակցութիւնը — աշխատում էին ամեն տեսակ արգելքներ ստեղծել, որ այդ շարժումներից հայ բանւորութիւնը հեռու լինի և չկարողանայ մասնակցել: Մի տեսակ բոյկոտի էր ենթարկւած բանւորական շարժումը հայ ազգային կազմակերպութիւնների կողմից: Փաստեր ինչքան կուզէք: 1901—2 թ. Կովկասի մայրաքաղաք թիֆլիսում անհնարին եղաւ գտնել մի հայ գրաշար, որ շարէր անլեզայ յեղափոխական թուղթիկներ և թիֆլիսի ս.-դ. կոմիտէն ստիպւած եղաւ մի վրացի գրաշարի յանձնարարել սովորելու հայերէն. նա սովորեց արդարև հայերէն և շարում էր, բայց իհարկէ ոչ շատ յաջող... Քանի սնդամ այդ թւերին փորձեր են եղել հայ գրաշարներից անլեզայ

խմբեր կազմել, բայց անյաջող: Անյաջող ոչ թէ անլեզայ գործունէութեան վտանգի կամ երկիւղի պատճառով, այլ որովհետեւ նացիոնալիզմի թոյնը վարակել էր նրանց ամբողջապէս և որ գլխաւորն է՝ նրանց թոյլ չէին տալիս մասնակցելու:

Կատարել է օրինակ այսպիսի դէպք. արտասահմանից Պարսկաստանի վրայով ս.-դ. կազմակերպութեան համար անլեզայ գրականութիւն է ստացել յեղափոխական սոցիալիստական ուղղութեամբ, հայերէն և այլ լեզուներով. մի բան, որը սպասուում էր այն ժամանակ ինչպէս երկնքի մանանայ. երևանում դաշնակցականների ձեռքն է ընկնում այդ գրականութիւնը, նրանք գտնում են, որ փաստակար է նա հայ ժողովուրդի համար և... ենթարկում են առևտրաֆէի—այսինքն՝ այրում են:

Մեր նացիոնալիստական իրականութեան այս մըթնոլորդը ֆիզիկական հնարաւորութիւն չէ տւել իր ժամանակին հայ բանւորութեան զարգանալու և քաղաքական ասպարէզ դուրս գալու:

Եթէ բննես մեր բանւորական դեմոկրատիայի յետաձագութեան պատճառները, նրանցից ամենից առաջ պէտք է փնտռել «Հայկական հարցի»-ի շուրջը ստեղծւած մըթնոլորդի մէջ, որտեղ գործող ոյժ էին հանդիսանում հայ նացիոնալիստ քաղաքական կազմակերպութիւնները:

Զօ-ական թւականները, ինչպէս ասացի, մեր նացիոնալիզմի յաղթանակի շրջանն էր: Անլեզայ նացիոնալիզմին ձեռք-ձեռքի տւած զուգընթացաբար զարգանում էր և լեզայ նացիոնալիզմը:

Մեր գրականութիւնը, մեր մամուլը շատ անգոյն և աղքատ է եղել ըստ բովանդակութեան և ուղղութեան: Նա չէ տւել քաղաքական սնունդ ժողովրդին, բացի այն՝ որ աւելի զարգացրել է նրանում կղերական-ազգասիրական ոգին: Արժբունու «Մշակի» շրջանը անցել էր. չկար կրակոտ և ոգևորող Արժբունին իր Մշակով. «Մշակ»ը հրատարակուում էր, բայց չէր խաղում այն գերը, ինչ որ

Արժբունու օրով. մշակականութիւնն էլ սկսել էր արդէն իր նշանակութիւնը կորցնել և թուլանալ:

Աւետիս Արասխանեանի «Մուրճն» էր հրատարակուում այդ ժամանակ: Պէտք է մի քանի խօսք ասել «Մուրճի» և Արասխանեանի մասին, որովհետեւ «Մուրճը» և թէ նրա խմբագիրը մի յայտնի ձգտումն են արտայայտել դեր խաղալու սոցիալական հարցում:

X.

Ես շատ մօտ էի Աւետիս Արասխանեանցին, անձնական բարեկամներ էինք, լինում էինք միմեանց մօտ. տնային բարեկամութիւն պահպանել ենք մինչև 1907 թւի վերջը: Ծանօթացայ նրա հետ 1889—90 թւականներին իմ արտասահմանից կովկաս վերադառնալուց հենց առաջին տարին: Այդ ժամանակ արդէն սկսել էր «Մուրճը» հրատարակել. նա աշխատում էր հաւաքել երիտասարդ գրական ոյժեր իր շուրջը. ամսագրի համար հարկաւոր էր, յիրաւի, նոր տիպի գրողներ: «Մուրճ»ը իր տեսակի մէջ առաջինն էր, որ մեր առևտայ գրական իրականութեան մէջ մի որոշ կերպարանք ընդունեց որպէս քաղաքակ. հասարակական ամսօրեայ հանդէս իր նիւթերի բովանդակութեամբ: Մինչև այդ ունեցել ենք «Կոունկ»ը, Ա. Յովհաննիսեանի «Փորձ»ը, բայց սրանք միակողմանի հայ կղերական, ազգային կեանքի նեղ շրջանակներն էին գլխաւորապէս ընդգրկում. Ստեփ. Նազարեանի առաջադէմ «Հիւսիսափայլ»ն էլ չի կարելի համեմատել «Մուրճ»ի հետ, որովհետեւ նա էլ՝ թէև հետաքրքրութեամբ էր կարդացում իրա Նազարեանի և մանաւանդ Նալբանդեանի յօդւածները, ըստ բովանդակութեան վտիտ էր: Ճշմարիտ է, «Մուրճ»ը համեմատաբար նիւթերով աւելի հարուստ էր և տնտեսական ու հասարակական կեանքի վերաբերեալ նորանոր հարցեր կարելի էր գտնել նրանցում շօշափւած, բայց այն, ինչ որ «Մուրճ»-ի օրգանական ցաւն

էր, դա նրա որոշ սխտեմ, ուղղութիւն չունենալն էր: «Մուրճ»-ի շուրջը հաւաքուել էին տարբեր ուղղութիւններ շարժուող անհատներ, սոցիալիստից սկսած մինչև չափաւոր լիբերալ և նացիոնալիստ գրողներ, մեծ ձեռքով անգոյն մարդիկ: Իրա Արասխանեանի վերաբերութեամբ էլ դրժւար է ասել թէ նա ինչ ուղղութեան մարդ էր, չափաւոր թէ ռազիկալ նացիոնալ-լիբերալ: Չնայելով տասնեակ տարիներ նրա հետ ծանօթ եմ եղել և գործ ունեցել, ես մինչև այժմ չեմ կարողանում որոշակի բան ասել նրա մասին: Աւելի շուտ կարելի է ասել՝ ամեն բան անփոփոխ էր Արասխանեանի մէջ և այդ ամեն բանից մի դրական ուղղութիւն ցայտուն, որոշակի կերպով չէր արտայայտուում նրանում: Նա և սոցիալիստ էր, և նացիոնալիստ, և չափաւոր լիբերալ, և ռազիկալ-լիբերալ. նրա համար ամեն ինչ արժէք ունէր. և հայ տէրտէրի շարժական ու աղօթքը, հայ նացիոնալիստի մարտական երգը, ու իդէալը, հայ բուրժուայի կապիտալի ոյժն ու կարողութիւնը և հայ գիւղացու և բանուորի մաճն ու մուրճը:

Սրանք բոլորը համաարժէքի նշանակութիւն ունէին նրա համար: Հենց նրա անձնական գրադմուկները բնորոշում են բաւականին նրա բնաւորութեան առաձգականութիւնը. նա և խմբագիր էր և գրող, և ուսուցիչ, և դպրոցի հոգաբարձու, և եկեղեցու երէցփոխ, և մասնաւոր առևտրա-արդիւնագործական մի ֆիրմայի գիրեկտոր և այլն:

Շատ անգամ առիթ եմ ունեցել վիճարանութեան բանելու նրա հետ գլխաւորապէս սոցիալական հարցերի մասին և ոչ մի հնարաւորութիւն չէ եղել մեզ մի համաձայնութեան գալու:

Վերջին անգամ 1907 թւի վերջերը, մի քանի ժամ շարունակ սուր վէճ տեղի ունեցաւ մեր մէջ Յակոբ Յակոբեանի ներկայութեամբ գիւղացութեան մասին կեանքի ուսումնասիրութեան գործին որոշ ուղղութիւն չախտի էր արդէն նրա կարծիքը. հոյն, նախկին և դիրեկտուր և թէ պէտք էր կանգնել դասակարգաւոր տալիս էր ֆիզիոկրատների պէս գեռակշիռ առաջնադասին շահերի պաշտպանութեան տեսակէտի վրայ: Նա

կարգ նշանակութիւն երկրի տնտեսութեան մէջ. նա չէր ընդունում շերտաւորման պրոցէսը գիւղացութեան մէջ և չէր էլ նկատում, որ տեղի է ունենում այդ պրոցէսը. նա մի տեսակ իդիլիական վերաբերմունք ունէր դէպի գիւղը և գիւղական կեանքը. նրա համար գիւղացութիւնը ներկայացնում էր որպէս մի ամբողջական դասակարգ:

Սոցիալ-դեմոկրատի տեսակէտը յայտնի է գիւղացութեան և գիւղական, ազրարային հարցի վերաբերմամբ: Այդ տեսակէտի հիման վրայ՝ այդ հարցերում ես նրա դիրքը ռեակցիոն էի համարում: Վերջին վէճի ժամանակ այդպէս էլ յայտնեցի. այդ բանը նրան սաստիկ զայրացրեց:

Նա թէև քաղաքատնտեսութեան դոկտոր էր, բայց սոցիալիզմի մասին շատ աղօտ գաղափար ունէր: Շատ անգամ է նա իմ մէջ յարուցել ծիծաղ այն դէպքերում, երբ նա սոցիալիզմի, սոցիալական, բանւորական և այլ այդպիսի խնդիրների մասին սկսում էր դատողութիւններ տալ:

Նա վերաւորում էր իմ դէպի նա հեզնական վերաբերմունքից և յայտնում, որ ինքը շատ է կարգացել սոցիալիզմի մասին և զարմանում միանգամայն, որ միմեանց չէինք հասկանում:

Իստակարգային կուլի սկզբունքը նրա համար կարծես գոյութիւն չունէր: 1898 թիւն էր. նրա հրատարակախօսական գրական գործունէութեան յոբելեանական տասնամեակը պէտք է կատարւէր: «Մուրճ»-ի յոբելեանական նոմերի համար ես պատրաստել էի «Ո՛ւր է գնում մեր երկիրը» վերաառութեամբ մի յօդւած: Նա հաւանեց այդ յօդւածը, բայց ոչ մի կերպ չէր կարողանում հաշուել այն մտքի հետ, որ պէտք էր տալ մեր տնտեսական և հասարակա-Յակոբեանի ներկայութեամբ գիւղացութեան մասին կեանքի ուսումնասիրութեան գործին որոշ ուղղութիւն չախտի էր արդէն նրա կարծիքը. հոյն, նախկին և դիրեկտուր և թէ պէտք էր կանգնել դասակարգաւոր տալիս էր ֆիզիոկրատների պէս գեռակշիռ առաջնադասին շահերի պաշտպանութեան տեսակէտի վրայ: Նա

առանձնապէս ընդգրկմանում էր այն մտքին, որ բանւորութեան շահը կարելի էր և պէտք էր տարբերել և բաժանել բուրժուազիայի շահից: «Ի՞նչ է նշանակում մերը եւ ձերը, ասում էր նա, բոլորն էլ մերն է — և հայ բանւորութիւնը, և հայ բուրժուազիան, նրանց շահը հաւասարապէս պաշտպանութիւն պէտք է գտնէ մեր կողմից»:

Նա առաջարկեց ինձ յօդւածի վերջը փոխել, ինչպէս ինքն էր ուզում: Ես մերժեցի: Այդ յօդւածը լոյս տեսաւ անփոփոխ նոյն թւին Տ. Նազարեանի «Տարազ»-ի համարներում:

Թէև նա 1905—6 թւականներին ձեռնարկել էր Մարքսի «Կապիտալի» հայերէն թարգմանութեան, որը նրա ուժից վեր բան էր, բայց և այնպէս նա ամենևին չէր ըմբռնել Մարքսի «Եւամուտները հիմնական սկզբունքները»: Նա Մարքսի «Կապիտալը» սկսել էր թարգմանել, որպէս համաշխարհային հռչակ վայելող մի գիտական աշխատութիւն, «ի փաստ և ի պարծանս հայ ազգային գրականութեան»: Չգիտեմ ի՞նչ եղաւ նրա թարգմանական աշխատանքի արդիւնքը: Նա կարգում էր իմ ներկայութեամբ 1905 թւի վերջերը «Կապիտալ»-ի առաջին գլուխները և ես գտնում էի, որ վատ էր թարգմանում և գիտական տեղմիները հայերէն անիմաստ բառերով թխում: Նա առհասարակ ամեն բանին ձեռնարկում էր, և ձեռնարկում էր շատ անգամ իր կարողութիւնից և ուժից վել բաներին: Նրա այդ ձեռնարկութիւնները էր և նրա էնցիկլոպեդիական հայերէն բառարան կազմելու գործը:

XI

Այն, ինչ որ սերտ կապել էր ինձ «Մուրճ»-ի հետ ոչ թէ նրա ուղղութիւնը և կամ բացառիկ արժանիքներէն, այլ որ «Մուրճ»-ը այդ ժամանակ հանդիսանում էր միակ օրգանը, որը անդ էր տալիս սոցիալական, տնտեսական և այլ այդպիսի ամենակարևոր հարցերի շատ թ

քիչ լուրջ ուսումնասիրութեան, մի բան՝ որի վերաբերմամբ մեր մամուլը և ժուրնալիստական այնքան ժլատ է եղել այն ժամանակ և թէ յետոյ: Ի՞նչ «Մուրճ»-ի և նրա խմբագրի արժանիքներից մէկը պէտք էր համարել: «Մուրճ»-ը այդ կողմից տալիս էր առաջին օրինակը մեր գրական աշխարհին: Այդ պատճառով նա մեր այդ ժամանակւայ խիստ նացիոնալիստական զարգացման շրջանում խրախուսանքի արժանի էր և ես անձնապէս քիչ ջանքեր չեմ գործ դրել աջակցելու Արասխանեանին «Մուրճ»-ի տարածման գործում: «Մուրճ»-ի խմբագիր Արասխանեանը գիտէր գրաւել ղէպի ինքը թարմ երիտասարդ ոյժեր, գնահատել և նրանց զարգացման նպաստել: Այսպէս օրինակ՝ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը եթէ այսօր ճանաչած է մեզանում որպէս աչքի ընկնող բանաստեղծներից մէկը, այդ, համարձակ կարելի է ասել, շնորհիւ Արասխանեանի: Եւ արդարը պէտք է խոստովանել. չլինէր Արասխանեանը, չէր լինի թերևս Յով. Թումանեանը որպէս բանաստեղծ:

Չնայելով, որ ես այնքան մօտ էի «Մուրճ»-ին և Արասխանեանին, «Մուրճ»-ի ամբողջ գոյութեան ընթացքում համեմատաբար շատ քիչ բան եմ տւել իմ իսկական ազգանւան և կամ Արկիմէդ կեղծանուն ստորագրութիւններով: Գաղափարութեան զարգացման, դպրոցական կեանքի, քաղաքային ինքնավարութեան վերաբերեալ մի բանի յօդւածներ և բանւորական ապահովագրութեան մասին մի աշխատութիւն, ահա գրեթէ բոլորը, ինչ որ հնարաւոր է եղել ինձ առ «Մուրճ»-ին: Եւ այդ մասամբ կարելի է բացատրել Արասխանեանի անձնական տարօրինակութիւններով: Որքան նա կողմնակից էր ազատ տեղ տալուն «Մուրճ»-ում սոցիալական և տնտեսական բովանդակութեամբ աշխատութիւններին, այնքան էլ նա ջանք էր գնում, որ նրանց վրայ անպատճառ «Մուրճ»-ի կնիքը դրած լինի, «Մուրճ»-ի ֆիրման հռչակելու նկատումներով: Ինձ այդ բանը բոլորովին հաճելի չէր:

Իմ «Բանւորական անգործագրութիւն» աշխատութիւնը տպագրելիս՝ նա մէկ երկու տեղ ինձ համար վերին աստիճանի անհաճելի փոփոխումներ և յաւելումներ էր արել. և երբ ես այդ մասին իմ գովոհութիւնը յայտնեցի նրան, նա պատասխանեց, որ ինքը այդպէս յարմար դատեց գոյութիւն ունեցող ցենզուրայի խտութիւնների պատճառով: Եւ երբ այդ աշխատութիւնը առանձին գրք-քոյկով հրատարակեց իմ Թիֆլիսից բացակայութեան ժամանակ, նրանում արտատպւեցին «Մուրճ»-ից խմբագրութեան անտեղի ծանօթութիւնները. նրան այդ մասին էլ գովոհութիւն յայտնեցի: «Էհ, ինչ անեք, պատասխանեց նա, թող «Մուրճ»-ի անունը առանձին բրոշիւրի մէջ էլ յիշատակի»:

Չարմանալի անուշադրութիւն, ցրւածութիւն թէ մոռացկոտութիւն ունէր Արասխանեանը: Ես տւել էի առանձնապէս նոյն վերոյիշեալ «Ապահովագրութիւն» աշխատութեան աղբիւրների ցանկը, որոնցից ես տեղեկութիւններ էի քաղել և մի քանի անգամ խնդրել էի շմոռանալ հրատարակել. և չնայելով այդ բանին՝ այդ ցանկը լոյս չտեսաւ խմբագրի մոռացկոտութեան պատճառով: Իմ մի ուրիշ յօդւածի վերաբերմամբ («Քաղաքակրթութեան աստիճաններ» վերտառութեամբ) յայտնել էի, որ նրա ամբողջ երեսները բառացի թարգմանել էի «Նարոզնայեա Վոյեա» յեղափոխական-սոցիալիստական հանդէսում տպւած Լաւրովի, Էնգելսի «Պետութիւն, Ընտանիք և Սեփականութիւն» երկի վերաբերեալ քննական մի յօդւածից. և այդ մասին ես ոչ մի յիշատակութիւն չեղաւ «Մուրճ»-ում, թէև այս դէպքում արդար էր Արասխանեանը, իմ հարցմունքին պատասխանելով թէ անհնարին էր այդպիսի մի յիշատակութիւն ցե՛ղ գուրայի սեփմի շնորհիւ:

Սակայն ես հաւատացած եմ, որ այդ հանգամանքը չլինէր, թերևս մոռացութեան տուէր և այդ քանը, ինչպէս

այդ շատ յաճախ պատահում էր Արասխանեանի հետ*):

Գլխաւորապէս վերոյիշեալ պատճառով նւագում էր իմ «Մուրճ»-ին աշխատակցելու եռանդը. մի ուրիշ պատճառ էլ կար. ինչպէս ասացի, ԾՊ-ական թւականներին և թէ յետոյ մեղական-կղերական խաւարամիտ հայ ցենզոր Բիշմիշեանի զրակոնական վերաբերմունքն էր դէպի ազատ խօսքը, մանաւանդ սոցիալիստական. բանւորական խնդիրների նկատմամբ: Քանի անգամ ցենզոր կոչւած այդ հրէշի հետ գործ եմ ունեցել, Ռուսաստանում լեզալ հրատարակւած Մարքսի և Էնգելսի ժողովրդական բնոյթ կրող բրոշիւրների հայերէն թարգմանութիւնն եմ ներկայացրել նրան և ամեն անգամ արգելք է դրել և կոնֆիսկացիայի ենթարկել: Մինչդեռ նոյն ժամանակներին վրաց ցենզոր ժուրուլին (այժմ Թիֆլիսի քաղ. դումայի անդամ) թոյլ էր տալիս ազատօրէն անցկացնել նոյն տեսակ վրացերէն թարգմանւած և կամ ինքնուրոյն բրոշիւրներ, ինչպէս և ազատութիւն էր տալիս արտայայտելու վրաց յայտնի մեսամէդասիստ խմբի օրգան «Կվալի» շաբաթաթերթին: Այս կողմից էլ տուժել է միայն հայ բանւորութիւնը:

Ես չեմ ուզում մոռանալ «Մուրճ»-ի և նրա խմբագիր Արասխանեանի գործունէութեան մի կողմը, որը աւելի հետաքրքրական կարող է լինել մեզ, սոցիալ-դեմոկրատներ-

*) Ահա նրա առասպելական մոռացկոտութեան մի նմուշը՝ նա շատ էր սիրում թէյ խմել. ամառային մի տաք օր ոչ ոք սանը չէ լինում. իր խմբագրական սենեակում նստած յօդւած էր գրում: Նա սամովարի մէջ կրակ է գցում և հետզհետէ ածուխ աւելացնում: Այդ միջոցին մտնում եմ մօտը. տեսնում եմ շուտ շուտ գնում է դէպի սամովարը և անհանգիստ է, որ չէ ես գալիս. շարունակ աւելացնում ածուխ և հա փչում է, հա փչում: Բանից դուրս է գալիս, որ ջուր չէր ածել սամովարի մէջ և կրակը այրել փչացրել էր սամովարը:

Տիկին Արասխանեանը պատմում էր յետոյ ինձ ծիծաղով, որ մօտ մի տասնեակ ուրբի էին վճարել վարդապետի սամովարը նորոգելու համար:

րիս. դա նրա—Արասխանեանի—բանւորական խնդրում դեր խաղալու փորձն է, մի թէև թոյլ, բայց նշանակալից փորձ։

Նա 90-ական թւականների երկրորդ կիսում ծրագրել էր հայ բանւորների մի ընկերակցութիւն հիմնել «Մուրճ» անունով. այդ ընկերակցութեան կանոնագիծը տպւած է «Մուրճ»-ի համարներից մէկում։ Այդ կանոնների հիման վրայ արհեստաւոր-բանւորները—ընկերակցութեան հիմնադիրները—պէտք է բանային մի արդիւնաբերական կօօպերատիւ արհեստանոց, ուր պիտի աշխատէին ընկերակցութեան անդամները և թէ գրաւէին դէպի արհեստանոցը ուրիշ հայ բանւորներին ևս աշխատելու։ Այդպիսով իրանք արհեստաւոր-բանւորները պիտի աշխատէին, շահագործէին որպէս արդիւնաբերական, առևտրական մի ձեռնարկութիւն, որի ծախսերը հոգալուց յետոյ զուտ արդիւնքը պիտի բաժանէին իրանց մէջ։ Այդ ընկերութիւնը պիտի գործը սկսէր այն ժամանակ միայն, երբ արդէն որոշ սեփական կապիտալ, հող և շէնք կունենար իր որամտմաղորութեան տակ։ Ես ձեռքիս տակ չունիմ այս ըուպէիս յիշեալ ընկերակցութեան կանոնագիծը ցոյց տալու համար այդ ձեռնակութեան մանր-բուժուագական բնոյթը, մի ձեռնարկութիւն, որի նպատակն էր փոքրիկ սեփականատէր դարձնել հայ արհեստաւոր-բանւորին, ապահովել նրա ընտանիքը, և ինչպէս ինքը Արասխանեանն էր ասում, այդ նիւթական բարեկեցութեան ձանապարհով բարձրացնել նրա ժաւորը և բարոյական զարգացման մակերևոյթը։ Նա իր շուրջն էր հաւաքել մի քանի արհեստաւոր-բանւորների՝ գլխաւորապէս Աւճալեան Հրմուզի ծառայող արհեստաւորներից, ինչպէս և Անգրկոյվկասեան երկաթուղու Թիֆլիսի կայարանի արհեստանոցների հայ բանւորներից մի քանիսին. երբեմն նրանց համար քաղաքաանտեսութեան այս կամ այն հարցի վերաբերեալ զրոյցներ էր կարգում իր տանը։ Ի հարկէ հայ բանւորներին ընդհանուր զարգացում տալու լաւ միտք էր յղացել Արասխանեանը, բայց նա այն մարդը չէր, որ նպաստէր հայ բան-

ւորութեան զարգացման իր դասակարգային շահերի ուղղութեամբ։ Հասկանալի է այդ պատճառով, որ սոցիալ-դեմոկրատը չէր կարող բացասաբար չվերաբերել դէպի բանւոր դասակարգը ցոյց տաւ նրա այդ կրթական փորձը և թէ յիշեալ արդիւնաբերական ձեռնարկութեան էկօպերիմենտը։ Արասխանեանը աշակերտել էր յայտնի քաղաքատես Ծովլերին և զարմանալի չէ, որ նա այդ մանր-բուժուագական էկոնոմիստի և թերևս Ծովլցէ Դելիի ազդեցութեան տակ կատարում էր մեր իրականութեան հողի վրայ նման փորձեր։ Այդ մասին առիթ եմ ունեցել վէճ ունենալու նրա հետ։ Այդ այն ժամանակն էր, երբ Թիֆլիսում նոր-նոր կազմակերպւում էին անլեզալ բանւորական-դեմոկրատական խմբեր. մղւում էր եռանդուն կերպով անլեզալ ստորերկրեայ քաղաքական-սոցալիստական պրոպագանդը և ազիտացիան Թիֆլիսի գործարանների և երկաթուղու արհեստանոցների բանւորական շրջաններում. այն բանւորները, որոնք հաւաքւում էին Արասխանեանի մօտ, յաճախում էին և իմ կազմակերպած անլեզալ բանւորական ժողովները. երբեմն այդպիսի ժողովներ տեղի էին ունենում նաև Աւճալեան ծառայող արհեստաւորների բնակարաններում։ Այդ ծառայողները, որոնք միևնոյն ժամանակ «Մուրճ» ընկերութեան անդամներն էին, երբեմն հրաւիրում էին ընկերական հացկերոյթի, բացի անդամներից, նաև այլ բանւորներ և հիւրեր։ Որքան յիշում եմ, 1897 թւին էր, երբ այդ հացկերոյթներից մէկին ներկայ էր նոյնպէս Արասխանեանը։ Այստեղ ձառեր արտասանելու ժամանակ իմ և թէ իմ ժողովների ս.դ. բանւորների կողմից քննադատական մերաբերմունք արտայայտեց դէպի «Մուրճ» ընկերութեան ձեռնարկութիւնը։ Մանաւանդ շատ խիստ սճով խօսեց ընկ. Մելիքը (ույժմ բոլշևիկ)։ Արասխանեանը շատ էր ընկճւած այդ դէպքի առիթով և ինձ նրանից յետոյ կշտամբում էր, որ բանւորներից օպոզիցիա եւ կազմում նրա դէմ. մի անհիմն կշտամբանք, որպէստէ Ա-

ըստխանեանի էկապերիմենտներէից դեռ շատ առաջ, տեղի էին ունեցել արդէն իմ զբաղմունքները բանւորական շը-
ջաններում:

Արասխանեանի «Մուրճ» ընկերութիւնը հենց իր սաղմի մէջ մեռաւ. ուրիշ կերպ էլ չէր կարող լինել որպէս ուտոպիստական ծրագրով սկսած մի ձեռնարկութիւն: Պրոլետարական շարժումներն արդէն սկսել էին: Մուրճական խմբի մի մասը միացաւ արդէն այդ շարժումներին. իսկ նրա աւելի արիստոկրատական, ապահով մասը (Աւճալայի բարեկեցիկ արհեստաւորները) հեռու մնալով բանւորական շարժումներին ակտիւ մասնակցութիւնից՝ իր համակրութիւններով աւելի մօտեցաւ Իսաչ-
նակցութեան:

Այսպէս ուրեմն Արասխանեանի հայ բանւորների սեփականատէր դարձնելու կամ նրանցից բանւորական արիստոկրատիա ստեղծելու փորձը, ինչպէս և սպասելի էր, անյաջող անցաւ կամ աւելի ճիշտը՝ նրանցից մի քանիսին զցեց հայ քաղքենական կուսակցութեան գիրկը:

«Մուրճ» ամսագրի նշանակութիւնը երկար ու բարակ քննելու ես ներկայումս ոչ ցանկութիւն ունիմ և ոչ էլ ժամանակ: Ինչպէս ասացի, նրան աշխատակցում էին ամեն ուղղութեան և գոյնի մարդիկ: Սխալ է այն կարծիքը, իբր թէ «Մուրճ»-ի աշխատակիցներից մի քանիսը անցնելով «Մուրճ»-ի շրջանով՝ յարել են յետոյ այս կամ այն քաղաքական հոսանքին: Որքան յիշում եմ, մի այդպիսի կարծիք յայտնել էր Աշ. Աթանասեանը նւառախ, Մ. Յովհաննիսեանի, Պաթակնեանի և այլոց վերաբերութեամբ Արասխանեանի մահւան առիթով իր զբաժ մի յօդւածում: Պէտք է ասել, որ «Մուրճ»-ը չէ ունեցել մի յայտնի քաղաքական շկոյա, որից իր աշխատակիցները որեւէ քաղաքական անունը և ուղղութիւն ստանային: Անհեթեթութիւն կը լինէր այդպիսի կարծիք ունենալ «Մուրճ»-ի վերաբերմամբ:

Եթէ գրական ոյժի գործադրութեան և մարզման ա-

ռաջին փորձի մասին է խօսքը, այդ դէպքում պէտք է ասել յատկապէս իմ վերաբերմամբ, որ աւելի շուտ Արժ-
բունու «Մշակ»-ն է եղել, որի մէջ սկսել են իմ գրչի աշխատանքի առաջին փորձերը: Իսկ ինչ վերաբերում է իմ քաղաքական ուղղութեան, ես այդ բանի համար պարտական եմ եւրոպական և ուսուսական գրականութեան և ոչ թէ հայկական աղքատ և անգոյն պրականութեան և մամուլին:

Իմ անձնական մօտ բարեկամութիւնը Արասխանեանի հետ բացատրում է գլխաւորապէս նրանով, որ նա ճանաչւած էր իբրև շիտակ և անկեղծ գաղափարական մարդ. նրա մի ուրիշ լաւ յատկութիւններից մէկն էլ այն էր, որ սիրում էր անխոնջ աշխատել և միշտ մտածում այն մասին, ինչպէս օգտակար լինել հասարակութեան: Իսկ մարդու ամենազնահատելի գծերից մէկը պէտք է համարել: Իմ մօտիկութեան դրդիչ պատճառներից մէկն էլ այն էր, որ «Մուրճ»-ը Արասխանեանի օրով միակ գրական պարբերական հրատարակութիւնն էր, որը, ինչպէս վերը ասացի, ազատ տեղ էր տալիս սոցիալական և տնտեսական ուղղութեամբ յօդւածներին: Ինքը Արասխանեանն էլ գտնում էր այդ հարցերի կարևորութիւնը. իսկ ես իմ կողմից շատ անգամ եմ թախանձել նրան՝ «Մուրճ»-ի այդ բաժնի վրայ առանձնապէս ուշադրութիւն դարձնելու: Նա միշտ ունկնդիր էր լինում ամեն անկեղծ խօսքին՝ ում կողմից էլ նա գալիս էր:

Եւ Արասխանեանը այն մարդկանցից էր, որ ոչ թէ պէտք է ղեկավարէր, այլ ուրիշները պէտք է ղեկավարէին նրան: Այն ժամանակ նրա գործունէութիւնը անհամեմատ աւելի օգտակար կը լինէր նասարակութեան:

Շատ ցաւալի է, որ վերջը նրա գործերը վատ և անյաջող զնացին. նա մեռաւ աղքատութեան մէջ և ընտանեկան դժբախտ հանգամանքներից տանջւած: Հենց որ մեռաւ, հայերը սկսեցին նրան շատ սիրել, նրա «անսահման սիրոյ նախեր» հանդիսաւոր մարդկանքներ և ծէսեր

կատարեցին. նրան սաստիկ փառաբանեցին և մինչև երկինք բարձրացրին. իսկ կենդանութեան ժամանակ այդ նոյն հասարակութիւնը «Մուրճ»-ին տալիս էր միայն 200 բաժանորդ...

Չարմանալի կուլտուրական հասարակութիւն! . .

*
*
*

Մեր հասարակական-յեղափոխական սկզբնական շրջանի վերաբերեալ իմ այս թուուցիկ «յիշողութիւններին» այստեղ վերջ եմ տալիս: Մինչև այժմ իմ «յիշողութիւնների» առաջին մասը գրեցի: Երկրորդ մասը վերաբերում է կովկասեան առաւելապէս բանւորական-յեղափոխական շարժումների պատմութեան, որը սկսում է անցեալ դարու 90-ական թւականների երկրորդ կէսից: Սակայն ես ստիպւած եմ առ այժմ բոլորովին ընդհատել «յիշողութիւններս». մտահոգիչ և սպառնական ժամանակներումն եմ քաղուած, որի պատճառով ինձ անհնարին է շարունակել մի այսպիսի ոչ-շտապողական աշխատանք: Միւս կողմից իմ „Рабочее движение и социал-демократия на Кавказѣ“ առևերէն աշխատութեան մէջ, որի առաջին մասը լոյս է տեսել արատասահմանում (ժընև) Գ. Վ. Պլեխանովի յառաջաբանով, ընթերցողը կարող է գտնել մեր երկրի պատմական 2-րդ շրջանի յեղափոխական շարժումների վերաբերեալ բազմաթիւ տեղեկութիւններ: Տարակոյս չկայ, եթէ երբեք ձեռնարկելու լինեմ իմ «յիշողութիւնների» վերջին մասը գրի անցնելուն, շատ բաներ, որոնք չկան յիշեալ աշխատութեան մէջ, կարող էին տեղ գտնել «յիշողութիւնների» մէջ:

90-ական թւականների երկրորդ կէսից նոր շրջան է սկսում մեր երկրի հասարակական և քաղաքական դարգացման պատմութեան մէջ: Այն ժամանակ, երբ մեր երկրի բուրժուազիան և միւս նոր հասարակական խաւերը դեռ քաղաքականապէս սրափում էին, հանդէս է գալիս պրոլետարիատը իր քաղաքական-յեղափոխական շար-

ժումներով. հին ցարական ռեժիմի համար մի վերին աստիճանի վտանգաւոր շարժում, որը հենց սկզբից մտահոգիչ դարձաւ նրա համար:

Բանւորական շարժումը մեր երկրում հենց սկզբից ընդունեց ինտերնացիոնալ և ոչ ազգային բնոյթ. այդ դասակարգի քաղաքական կազմակերպութիւնը ևս զարգացաւ միջազգայնութեան հիմքերի վրայ:

1897 թւից սկսած արդէն այդ կազմակերպութեան առաջին խմբերն են առաջ գալիս թիֆլիսում:

Ս. թւին և թէ յետոյ բանւորների միջոցով ես ծանօթացայ վրաց և ուրա անլեզալ գործիչների հետ: Բանւորական գործադուլները սկսում են այդ ժամանակից տեղի ունենալ աւելի յաճախ և դրա հետ միասին աճում են բանւորական անլեզալ ժողովներ:

Բանւորական ինտերնացիոնալիզմը ստորերկրեայ ծածկի տակ զարգանում էր տասնեակ տարիներ շարունակ, մինչև որ վերջապէս իր առաջ ցցւած պատնէշները խորտակեց և լոյս աշխարհ ելաւ բացարձակ կռիւ մղելու հին ռեժիմի և բուրժուազական նացիոնալիզմի դէմ: Եթէ նա մի կողմից աւետում էր մեզ սոցիալիզմի յաղթանակի ապագան, միւս կողմից՝ նա մեր երկրում հանդէս էր գալիս իր մարտական լողուններով ուսանական, թուրքական, հայկական, վրացական և այլն նացիոնալիզմի դէմ: Միջազգային դիտակից բանւորութիւնը ամենամեծ և վտանգաւոր թշնամին է ամեն տեսակ նացիոնալիզմի: Սրա նահանջն ու պարտութիւնը մի պատմական աներաժեշտութիւն է, առանց որի կարելի չէ սոցիալիզմի զարգացումն ու յաղթանակը: Հենց այդ պայքարը նացիոնալիզմի դէմ մեր երկրի իրականութեան մէջ՝ կազմում է միջազգային բանւորութեան դասակարգային կուսի պատմութեան փայլուն էջերից մէկը:



ՀԵՂԻՆԱԿԻ ՍՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Բանորների սպանութեան թիւն. 1894 թ.
արտատպած «Մուրճ»-ից 50 կ.
2. Փոչ Զաւակ. գրածն 5 դրժող. 1905 թ. 50 կ.
3. Рабочее движение и социалдемократія на
Кавказѣ. Գ. Վ. Չլեխանովի յոտա-
ջարանով. ժրնհ, 1910 թ. (անլեղ. հրատ). 2 ֆր.
4. La Guerre Actuelle et le Socialisme. Essai
historico-critique 1 ֆր. 20 ս.
5. Անցեալի յիշողութիւններից 1 ս.

ՀՈՒՏՈՎ ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ

1. «Հայ-Յասրթիան յարաբերութիւնների մասին» գրքից
2. Раб. движ. и социалдемократія на Кавказѣ, ինչպիսիս
ըսելու թիւնը



11,825